Աշխատասիրությամբ Աշոտ Արևշատյանի

ՏԱԹԵՎԱՑՈՒՅ ՄԻՆՉԵՎ ՏԱԹԵՎԱՑԻ

ՏԱԹԵՎԱՑՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՏԱԹԵՎԱՑԻ

Առաջաբան

Սույն աշխատությունը ներկայացնում է 17-րդ դարի մեր մեծահամբավ հայրապետներից Մովսես Տաթևացու կյանքն ու գործունեությունը: Գրքույկի լույսընծայման առիթը հանդիսացավ նրա ննջման տարելիցի 370-ամյակը (1632-2002 թթ): Գրքույկը ներառում է նաև բոլոր այն մեծանուն անձանց, որոնք առնչություն են ունեցել այս երանելի հայրապետի հետ: Եվ որովհետև նրա անունն էլ սերտորեն կապված է եղել Անանիա առաքյալի անապատի (վանքի) հետ, ուստի կպատմվի նաև սուրբ Անանիայի և մինչև Մովսես Տաթևացին եղող և նրան հաջորդող այն սուրբ այրերի մասին, որոնք առնչվել են սույն անապատին, որպեսզի լավագույնս ճանաչենք նրանց և իմանանք այն դերն ու նշանակությունը, որ նրանք և այս վանքն ունեցել են հայ հոգևոր կյանքում: Եվ կտեսնենք, թե ինչ երախտագիտության և գովքի են արժանացել նրանք թե՛ իրենց ժամանակակիցների, թե՛ հետնորդների կողմից: Թեպետ ներկայացվող նյութը սկսվում է առաքելական ժամանակաշրջանից և ավարտվում մեր օրերով, սակայն այն ուղղակիորեն սկզբից մինչև վերջ առնչվում է Մովսես Տաթևացի հայրապետի անվան հետ: Այսօր անապատի տեղում կանգուն է մնացել Անանիայի մատուռը, ինչպես նաև մեզ բոլորիս հայտնի սուրբ Զորավոր եկեղեցին:

Գրքույկում շոշափվում են նաև այն հարցերը, թե ինչու է եկեղեցին ստացել Զորավոր անունը և թե ինչ հոգեշահ և գիտանպաստ գործունեություն է դարեդար ծավալվել այս վայրում:

Աշխատությունը նպատակ է հետապնդում նաև ներկայացնելու մերօրյա հայորդիներիս հաճախ ոչ արժանավոր գիտակցված հոգածությունը և հարգանքը մեր սուրբ հայրերի հիշատակի հանդեպ: Այսօր մեր գովելի հարգանքի տուրքն ենք մատուցում հայ ազատագրական շարժման և մշակույթի մեծերի հիշատակին՝ օտար ափերից նրանց աճյունները բերելով և հայրենի հողում ամփոփելով: Բայց միևնույն ժամանակ մենք այստեղ կտեսնենք, որ մեզանում, մեր կողքին կան մեր երկրի և եկեղեցու մեծանուն այրերի անարգ և անխնամ վիճակում գտնվող շիրիմներ, որոնցում նջջածները ազգի և եկեղեցու համար իրենց անձերը որպես կենդանի զոհ են մատուցել:

Հույս ունենք, որ այս համեստ գրքույկը կնպաստի, որ մենք նոր և հոգածու աչքով նայենք սուրբ Զորավոր եկեղեցուն և ըստ արժանվույն գնահատենք այս մեծագույն այրերի հիշատակը:



«Նա (Մովսես Տաթևացին) հոգեընկալ այր էր, առաքինազարդ, Սուրբ Հոգու շնորհների բնակարան՝ սիրված Աստծուց և մարդկանցից:

Գահ բարձրանալուց ի վեր նա գրեթե հիմքից նորոգեց Սուրբ Աթոռը՝ պայծառացնելով այն թե՛ հոգևոր, և թե՛ նյութական կարգավորությամբ:

Կարելի է ասել, որ մեր Լուսավորչից, նրա թոռներից և թարգմանիչներից հետո մյուս հայրապետներից ոչ ոք չեղավ այնպիսի երախտավոր և բարերար Սուրբ Աթոռին և հայոց ազգին, ինչպես նա»:

(Սիմեոն Երևանցի, «Ջամբռ»):

ՄՈՒՏՔ

Առաջին հայացքից ինչ-որ տեղ անշուք, բարձրահարկ շենքերի մեջ ծվարած Երևանի սուրբ Զորավոր Աստվածածին եկեղեցին իր անպաճույճ ու համեստ, հեզ և խոնարհ արտաքինի ներքո պարփակում է դարերի խորքից եկած մեծ խորհուրդներ և եղելություններ, որոնց մասին, ցավոք, շատ քիչ բան է հայտնի մեր այսօրվա հանրությանը: Այս վայրը եղել և մնում է Հայաստան աշխարհի մեծագույն սրբատեղերից մեկը, որտեղ դարեր շարունակ կենցաղավարել և գործել են մեր եկեղեցու մեծագույն հայրերից շատերը: Նրանցից մի քանիսը այստեղ արժանացել են վարդապետական գավազանի, ոմանք էլ ձեռնադրվել են եպիսկոպոս: Մեր մեծահամբավ հայրապետներից ոմանք իրենց երկրային կյանքի ամենաբեղուն շրջանն անցկացրել են այս վայրում, որը դարեր շարունակ գործել է որպես անապատ և կոչվել սուրբ Անանիայի անվամբ:

Այս հայրապետներից մեկը՝ Մովսես Տաթևացին, դեռ իր վարդապետության շրջանում նորոգեց այս սրբավայրը՝ իր շուրջը հավաքելով ճգնազգայաց բարեպաշտ անձանց՝ այն նորից դարձնելով ծաղկուն և գործող վանք, և նա այստեղ ձեռնադրվեց եպիսկոպոս և իր կաթողիկոսության օրոք էլ հաճախակի այցելում էր իր սիրելի վանքը: Նախախնամության կամքով էլ իր մահկանացուն կնքեց այս վայրում՝ 1632 թվականի մայիսի 14-ին, որի 370-րդ տարելիցի առթիվ սուրբ Զորավոր եկեղեցում մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ:

Սակայն, մինչև երանելի հայրապետի վարքը ներկայացնելը, հարկ է անդրադառնալ այն բանին, թե ինչո՞ւ այս վայրը կոչվեց Անանիայի անապատ և ի՞նչն է ձգողական ուժը այս

սրբավայրի, որ դարեր շարունակ բազում մեծահամբավ կրոնավորների և քրիստոնյա ուխտավորների է հավաքել իր շուրջը: Դարեր առաջ, ինչպես ասում է Առաքել Դավրիժեցին, «վաղնջական ժամանակներից» այստեղ են բերվել և ամփոփվել Տիրոջ 72 աշակերտներից մեկի՝ սուրբ Անանիա առաքյալի նշխարները, որոնց վրա կառուցվել է մատուռ-դամբարան: Սա «Գործք Առաքելոցում» հիշատակված այն Անանիան է, որը բժշկեց Պողոս առաքյալի աչքերը: Նրա մասին ավելի մանրամասն պատում կա «Լիակատար վարք սրբոց»-ում, որն էլ առաջին անգամ աշխարհաբարով ներկայացնում ենք ձեզ:

ՍՈՒՐԲ ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտների մեջ անվանի և ընտրյալ դասի մեջ երևելի սուրբ Անանիա առաքյալը Քրիստոսի 72 աշակերտներից մեկն էր, որը համարվում էր նաև սուրբ առաքյալներ Պետրոսի և Անդրեյի աշակերտը և բազում հարցերում՝ նրանց գործակիցը, մինչև որ հավատի Վեմի կողմից ձեռնադրվեց Դամասկոսի եպիսկոպոս: Ենթադրվում է, որ այն եղել է նրա (Անանիայի) ծննդավայրը:

Անանիան մարմնով փառահեղ էր, հեզ և սրտով հանդարտ, լի՝ Աստծո Հոգով, խոսքով՝ հարուստ, գործերում՝ զվարթ: «Գործք Առաքելոց»-ում տրվում է նրա կատարյալ գովքը, որտեղ սուրբ Ղուկասը պատմում է, թե ինչպես Տերը երևաց նրան և մտերմորեն պատվիրեց՝ գնալ ու գտնել Դամասկոս եկած Սողոսին և մկրտել ընտրյալ այդ անոթին, որը տեսիլքում տեսնելով Անանիայի կերպարանքը՝ սպասում էր նրա գալստյանը, որպեսզի սա բժշկի իրեն հոգու և մարմնի կուրությունից: Եվ ի՜նչ անվեհերությամբ և որդիական համարձակությամբ Անանիան իր տարակուսանքների փարատման համար խնդրեց Տիրոջը և պատասխան ստացավ Նրանից, որովհետև խորշելի էր բոլորի համար Սողոսի անունը: Եվ այնուհետև տիրաբար գնաց ու քարոզեց նրան և Սողոսին դարձրեց Պողոս. քանզի ձեռքը դնելով նրա վրա՝ լուսավորեց նրա խավարած աչքերը, մկրտեց ու զորացրեց նրան՝ դարձնելով ճշմարտության քարոզիչ: Եվ մեծն Անանիան նրա մեջ տեսավ հեթանոսների վարդապետին, Աստվածապարգև վարժապետին, որի գործերին ու վաստակին հետագայում հաղորդ եղավ:

Այս ամենի մասին Պողոսն ինքը հազարապետի ատյանում, Երուսաղեմի բոլոր հրեաների առաջ պատմել է պարծանքով. «Անանիա անունով մի մարդ՝ երկյուղած ըստ օրենքի և վկայված Դամասկոսում բնակվող բոլոր հրեաների կողմից, եկավ կանգնեց ինձ մոտ և ասաց. «Սավո՛ւղ եղբայր, վե՛ր նայիր», և ես իսկույն վեր՝ նրան նայեցի. այդ պահին բացվեցին իմ կուրացած աչքերը, և ես տեսա նրան: Եվ նա ասաց ինձ. «Մեր հայրերի Աստվածը առաջուց ընտրեց քեզ, որ ճանաչես Նրա կամքը և տեսնես Արդարին, լսես Նրա բերանի ձայնը, որպեսզի բոլոր մարդկանց մոտ Նրա վկան լինես այն բաների համար, որ տեսար և լսեցիր: Արդ, ինչո՞ւ ես հապաղում, վե՛ր կաց, մկրտվի՛ր և լվա քո մեղքերը՝ Նրա անունը կանչելով»» (Գործք. 22.12-16):

Մինչև այստեղ Սուրբ Գրքից էր, իսկ վկայաբանները նրա մասին ավանդում են այսպես. «Արդ, թեպետ սուրբը Անանիա առաքյալի աթոռը Դամասկոսում էր, որտեղ կային ոչ սակավ աշակերտներ և հավատացյալներ, սակայն նա հաճախ քարոզում էր Ավետարանը ասորիների և պաղեստինցիների երկրի շրջակայքում, կատարելով հրաշքներ և գործեր Քրիստոսի անունով՝ տարիներ շարունակ կրելով հանդերձ բազում հալածանքներ հրեաների և հեթանոսների կողմից: Եվ այնպես եղավ, որ նա քարոզությամբ շրջում էր Հելևթերուպոլսում (որը թարգմանվում է «ազատ քաղաք») և նրա շրջակայքում: Եվ բռնեցին նրան կռապաշտները, որ բնակվում էին Բեթագավր ավանում՝ Հորդանանից դեպի արևմուտք, որը, ըստ

ոմանց, կոչվում է Բեթալուիմ, որը մի մղոն հեռու է Հելևթերուպոլսից, Գազայից դեպի վար: Եվ կանգնեցրին նրան դատավորի առջև, որին կոչում էին Լիկիանոս կամ Ղուկիանոս, որը հույժ թշնամի մի այր էր Քրիստոսի անվանը և սաստիկ ջատագովը չաստվածների, որոնց պաշտում էին կայսրերը:

Առաջինը սա սկսեց քաղցրությամբ խոսել սուրբ առաքյալ Անանիայի հետ և ասաց. «Ով դու այր, տեսնում եմ քեզ որպես մի սքանչելատեսիլ իմաստունի և հանճարեղ այրի. արդ, եթե լսես ինձ, բազում բարիքների կարժանանաս դու. այժմ մոտեցիր և զոհ մատուցիր աստվածներին, որպեսզի չարաչար տանջանքներով անձդ կորստյան չմատնվի»: Պատասխան տվեց նրան սուրբ Անանիան և ասաց. «Կուռքերին ես զոհ չեմ մատուցի, և խուլ ու համր բագիններին չեմ երկրպագի, որոնք բնակարան են դևերի, այլ կերկրպագեմ Հիսուս Քրիստոսին՝ իմ Տիրոջը, և ճշմարիտ Աստծուն, Որը մեզ համար եղավ գիտության լույս և Որին մեր իսկ աչքերով տեսանք, քանզի Նա մարմնով եկավ աշխարհ և մեզ ազատեց կուռքերի մոլորությունից, ինչի համար և ես պատրաստ եմ տանջանքների և մահվան, քան թողնեմ ճշմարտությունը և մոլորվեմ խաբեությամբ»: Բարկացավ դատավորը և ասաց. «Կարծում եմ, թե մարմնիդ մեծության և զորության վրա հույս դնելով աշխատում ես արհամարհել տանջանքները, որով և քո իմաստությունը քեզ անմտության է մղում»: Ապա ասաց դահիճներին. «Մերկացրե՛ք և չարաչար ծեծե՛ք դրան»: Իսկ առաքյալը աչքերը և ձեռքերը երկինք բարձրացնելով՝ ասաց. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, զորությունների՛ Աստված, թող թշնամին ինձ իր թակարդը չգցի, այլ թող ես էլ արժանի լինեմ հանուն Քեզ չարչարանք կրելու և Քո պսակով զարդարվելու՝ իմ կյանքով և մահով Քո ընտրյալ աշակերտների շարքը դասվելու համար»: Այնժամ գազանաբարո դահիճները անողորմաբար հարվածում էին սրբի թիկունքին չոր արջառաջլերով, իսկ պաշտոնյաներից մեկը աղաղակում էր. «Հնազա՛նդ եղիր դատավորին և զոհեր մատուցիր հզոր



դիցերին»: Իսկ սուրբը ոչ մի պատասխան չէր տալիս և ոչինչ էր համարում մարմնական ցավերը Քրիստոսի սիրո դիմաց: Դատավորը չարունակեց բարի խոսքերով հրապուրել նրան և ապա, ըստ իր լրբության, կշտամբեց սրբին և կախել տվեց փայտից, քերել տվեց նրա մարմինը երկաթե քերիչներով մինչև ոսկորները և ջահերով խանձել տվեց վերքերը: Մինչ այդ տանջանքների մեջ էր երանելին, ասաց նրան դատավորը. «Մինչև ե՞րբ չպիտի հնազանդվես ինձ և հանձն չառնես մեծարել անմահ դիցերին, որոնց պաշտում է ինքնակալը»: Պատասխանեց նրան Անանիան. «Ինչո՞ւ ես ստիպում ինձ, որ պաշտեմ սնոտիներին, մեռելոտիներին և գարշելիներին, որոնք մարդկանց ձեռքի գործ են՝ կերտված փայտից, քարից և պղնձից, և ինչպե՞ս չես հասկանում անմտությունը նրանց, որոնք անբանը և անշունչը աստվածային անվամբ են պատվում և իրենց ստեղծածին արարիչ են համարում՝ ապավինելով նրանց»: Այնժամ ամոթահար եղավ դատավորը և քաղաքից դուրս հանելով՝ քարկոծել տվեց նրան: Եվ այդ պահին ասաց սուրբը առաքյալը. «Ո՛վ Թագավոր թագավորների, Տե՛ր տերերի, ընդունի՛ր իմ անձը որպես Քեզ պատարագ, որպես ընդունելի զոհ՝ ի փառս Քո սուրբ անվան», և այդպես ավան-

դեց հոգին:

Իսկ սրբի մարմինը, որ ծածկված էր քարերով, նրա աշակերտներն ու ծանոթները վերցրին, տարան թաղեցին Դամասկոսում՝ իր հայրենի ժառանգությունում, Տիրոջ 70 թվականին:

Սուրբ առաքյալ Անանիայի բնակավայրը, ըստ հին դարերի զանազան մատենագիրների, հիշատակվում է Դամասկոսը, որոնք ասում են, թե այնտեղ եկեղեցի կառուցվեց Փրկչի և Նրա առաքյալ Անանիայի անունով, հետո այլազգիները այն իրենց համար մզկիթ դարձրին: Իսկ նրա պատվական նշխարները, ինչպես ասում են, առաջինը տարան Դամասկոս՝ Հուդայի ապարանքը, որտեղ ժամանակին կենում էր Պողոսը, և այնտեղ ևս գեղեցիկ տաճար կառուցվեց: Որոշ ժամանակ անց նշխարները փոխադրվեցին Հռոմ, որտեղ սրբի գլուխը երբեմն ի ցույց էին դնում սուրբ Պողոսի տաճարում: Նրա որոշ նշխարներ էլ պահվում են սրբուհի Բրասկետայի եկեղեցում: Կառլոս 43-րդ կայսրը, որը և արքան էր Բոհեմի, խնդրեց և վերցրեց Հռոմից սուրբ Անանիայի գլուխը, ոսկով և արծաթով զարդարեց այն, ապա նորից ընծայեց Բրասկետայի եկեղեցուն»:

Հետագայում նրա սուրբ նշխարները բերվեցին Հայաստան և ամփոփվեցին Երևանում, որի շիրմի վրա դեռ վաղեմի ժամանակներից կանգնեցված է մի մատուռ. այն կոչվեց «Անանիայի դամբարան» և դարձավ մեծ ուխտատեղի, ապա՝ վանք, որ կոչվեց «Անանիայի անապատ»: Այդ մասին պատմում են Թովմա Մեծոփեցին, Առաքել Դավրիժեցին, Ղևոնդ Ալիշանը, Մաղաքիա Օրմանյանը և այլք:

Տերը նրան օժտել էր բազում շնորհներով՝ նաև հրաշագործությամբ, որը չդադարեց նրա ննջելուց հետո էլ, քանզի նրա սրբասուն նշխարներն էլ իրենց մեջ կրում են սքանչելագործ զորություն: Եվ նրա սբ. նշխարների այս վայրում գտնվելով է նաև պայմանավորված «Զորավոր» անվանումը, որի մասին եղած վկայություններից է վաղ շրջանի (1450 թ.) մի ձեռագիր: Այս ձեռագրի հիշատակարանում, որը թողել է գրիչ Հովհաննեսը, ասվում է, որ այն ընդօրինակվել է Երևանում, Անանիայի ամենազոր գերեզմանի հովանու ներքո՝ «Ի փոքրիկ յանապատիս Երեւանաւ եւ ընդ հովանեալ ամենազոր սբ. Անանիա առաքելոյ գերեզմանիս»:

Այս վայրը ժամանակ առ ժամանակ եղել է ծաղկուն վանք: Իսկ ինչո՞ւ՝ ժամանակ առ ժամանակ. որովհետև բազում ռազմատենչ ազգերի ասպատակության թատերաբեմ է եղել Հայաստան աշխարհը, որի հետևանքով ավերվել են ոչ միայն գյուղերն ու քաղաքները, այլև վանքերը, անապատներն ու եկեղեցիները:

Եվ հոգևոր կյանքը ևս պայմանավորված լինելով այս իրավիճակներից՝ մե՛կ վերելք է ապրել, մե՛կ՝ անկում:

Սբ. Անանիայի անապատն էլ, իր վրա կրելով այս բազում աղետների հետևանքները, երբեմն լքվում էր և ապա նորից զարթոնք ապրում: Քանզի ինչքան էլ ավերվում էին շինությունները զավթիչներից և բնական աղետներից, միևնույն է՝ սբ. առաքյալի մասունքները Աստծո նախախնամությամբ մշտապես անխախտ մնում էին իրենց տեղում՝ նորից ու նորից իր շուրջը հավաքելով միաբանների, ուխտավորների և հայոց աշխարհի մեծանուն այրերի:

Չնայած այն բանին, որ Երևանում եղել են այլ վանքեր ևս, սակայն, որպես առանձնահատուկ, իր համբավով միշտ շեշտվել է սբ. Անանիայի անապատը:

Այդ առանձնահատկությունն ըստ արժանվույն գնահատած և այս սուրբ վայրի հետ առնչված անձանց մասին կպատմվի ստորև:



ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՂԵՌՆ

Ըստ պատմիչների, Երևանում է վախճանվել 11-րդ դարի հայոց հռչակավոր վարդապետ սբ. Հովհաննես Կոզեռնը և թաղվել Անանիայի անապատից ընդամենը 3-4 հարյուր մետր հեռու գտնվող բլրի վրա, որը հետագայում կոչվեց նրա անվամբ՝ «Կոզեռնի բլուր»: Եզրակացնելով այս սրբավայրի «Վաղնջական ժամանակներից» գոյություն ունենալուց և նրա մեծահամբավությունից, և նրա մերձակայքում մեծ վարդապետի գերեզմանի առկայությունից, կարծում ենք, որ նա իր կյանքի վերջին շրջանն անցկացրել է այս սրբատեղիում և իր մահկանացուն էլ կնքել է այստեղ:

Հետաքրքիր է և կարծես անուղղակի ապացույց այդ բանի նաև այն, որ այս անապատում են իրենց մահկանացուն կնքել վերը նշված Մովսես Տաթևացի կաթողիկոսը և մեծ վարդապետ, արտաքին գրոց գիտակ Մելքիսեթ Վժանեցին և թաղվել նույն բլրի վրա՝ սուրբ Հովհաննես Կոզեռնի կողքին: Եվ կարծես թե սա ի սկզբանե եղել է այս անապատի գերեզմանոցը, այնուհետև վերածվել համընդհանուր գերեզմանոցի:

Արիստակես Լաստիվերտցին, իր «Պատմության» մեջ թվարկելով 10-11-րդ դարերի վարդապետներին, հիշատակում է նաև սբ. Հովհաննես Կոզեռնին:

«Այն ժամանակ վարդապետներն էին Սարգիսը, Տիրանունը և Ենովքը՝ կաթողիկոսարանում, Սամվելը, որ Կամրջաձորի վանքի առաջնորդն էր, Հովսեփը, որ Հնձուց նախագահն էր, Ստեփաննոս Տարոնացին, որ աշխարհապատում գիրքը շարադրեց սքանչելի ոճով՝ սկսելով այն առաջին մարդուց և վերջացնելով Գագիկի վախճանով, որի մասին էլ այս պատմությունն է, նույն գավառացի Հովհաննեսը, որին

Կոզեռն* էին անվանում, որը և մեր հավատի վարդապետությունը գրեց, չափազանց բանագետ Գրիգորը (Նարեկացին) և շատ ուրիշներ, որոնց օրերում ուղղափառ եկեղեցու զորությունը շատ բարձրացավ: Իսկ նրանք, որոնք խեթ աչքով էին նայում մեզ սրանց վարդապետական գործերից սմքած՝ մկների նման սողոսկելով պատերի ծակերն էին մտնում»:

Այնքան մեծահամբավ էին այս սբ. վարդապետները, որ նրանց մասին գիտեին ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Բյուզանդիայի կայսր Վասիլ 2-րդը հաճախ դիմում էր նրանց օգնությանը տոմարագիտական և այլ հարցերի պարզաբանման համար. «Նա հանվանե գիտեր հայր Հովսեփ Ընծայեցուն, լսել էր նաև Հովհաննեսի՝ Կոզեռն մականվանյալի մասին: Վասիլն, ահա, նամակ գրեց հայոց արքա Հովհաննեսին, խնդրելով, որ նա իր մոտ՝ Կոստանդնուպոլիս ուղարկի նրանց, որպեսզի նրանցից իմանա ճշմարտությունը և Զատկի իսկական օրը: Նրանք, սակայն, հանձն չառան գնալ, բայց իրենց խորազնին քննության արդյունքը մանրամասն հայտնեցին կայսեր» (Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրություն»):

Երբ Տրապիզոնում ջրօրհնեքի ժամանակ Պետրոս Գետադարձ հայրապետի ձեռքով գետը մեծ հրաշքով կանգ առավ և ծագեց հրաշափառ լույսը՝ ի զարմանս կայսեր և հունաց ազգի, նրա հետ և նրան աղոթակից էր նաև սբ. վարդապետ Հովհաննես Կոզեռնը:

Սա զարդարված էր բազում շնորհներով, որոնցից էր նաև մարգարեության շնորհը: Երբ 1037 թվականին մեծ և ահավոր նշաններ երևացին Հայաստանում (արեգակի խավարում, երկրաշարժ և այլն), բոլորը՝ սկսած թագավորից և կաթողիկոսից, իրենց հայացքը հառեցին սբ. վարդապետի կողմը՝ իմանալու այս սահմռկեցուցիչ երևույթների պատճառը:

«Ահաբեկվել ու սարսափ էին ապրում բոլոր արարածները

* Ենթադրվում է, «որ ուղտի ճագը» նշանակող ***Կոզեռն*** մականունը Հովհաննեսը ստացել է շատ ծնրադրելու պատճառով:

և վիճակից դուրս գալու ելք չէին գտնում. սոսկալի նշանից զարհուրած և լեղապատառ՝ նրանք շվարել էին: Այդ ժամանակ հայոց հայրապետ տեր Պետրոսը և Հովհաննես Թագավորը պատվական մարդկանց ուղարկեցին հայոց սուրբ վարդապետ Հովհաննես Կոզեռնի մոտ՝ իմանալու՝ երևույթի նշանակության մասին: Նա սուրբ մարդ էր, հիանալի ճգնավոր, Աստծո Հին ու Նոր Կտակարանների մեկնիչ և վարդապետական շնորհքով օժտված: Հայոց վարդապետի մոտ ուղարկվողներն էին Գրիգոր Մագիստրոսը՝ Վասակի որդին, Հայկազուն մեծ Սարգիսը, հայոց երկրի մի քանի այլ ազատներ և քահանաներ. նրանք գնացին իմանալու ահավոր նշանի... երևալու պատճառը: Գնալով հայոց վարդապետի մոտ՝ նրան գտան վշտահար, երեսն ի վայր գետնին ընկած, արցունք թափելիս: Նա այնպես դառնորեն էր լաց լինում և աղաչում, որ ոչ ոք չհամարձակվեց նրան որևէ բան հարցնել: Նրան գտան խոր սգո մեջ ընկղմված, անչափ ցավաբեկ. նա անվերջ արտասուք էր թափում և կուրծքն էր ծեծում: Հայոց իշխանները նստեցին Հովհաննես վարդապետի մոտ և մինչև օրվա վեցերորդ ժամը չհամարձակվեցին խոսել ու ահավոր երևույթի մասին հարց տալ» (Մատթեոս Ուռհայեցի):

Եվ ապա ելնելով իր տեղից՝ վշտաբեկ վարդապետը բացատրում է նրանց այդ նշանների իմաստը, որ ի վերուստ հայտնվել էր նրան: Տեսիլքում կանխագուշակվում էին աշխարհի և մասնավորապես, Հայաստանի վրա գալիք աղետները և հասարակության բոլոր դասերի հոգևոր ու բարոյական վատասերման այլազան երևույթներ, որոնք մեկ առ մեկ նկարագրված են «Ժամանակագրության» մեջ:

Հիմնվելով վերոհիշյալ այն փաստերի վրա, որ սբ. Հովհաննես Կոզեռնը կյանքի վերջին շրջանում ապրել է սբ. Անանիայի անապատում և այստեղ էլ վախճանվել, կարելի է հետևություն անել, որ հայոց մեծերն այստեղ են եկել՝ նրանից իմանալու այդ արհավիրքների պատճառներն ու մեկնությունները:

«Հովհաննես Կոզեռնը թողել է մի քանի աշխատություններ՝

Ա) Տեսիլը, որ աշխարհի կործանումն է գուշակում,

Բ) Գիր հավատոց,

Գ) Մեկնություն տոմարի,

Դ) Վասն Վարդավառի:

Ն. Ակինյանը նրան է վերագրում նաև Շապուհ Բագրատունու անունով հրապարակված պատմությունը: Իսկ Անդրեաս Բյուզանդացի տոմարագետը Հովհաննես Կոզեռնի տոմարագիտական աշխատանքի մասին գրել է մի հատուկ գլուխ, որը վերնագրված է՝ «Մեկնութիւն Տումարի զոր արարեալ ի Յովհաննես վարդապետի, որ մականուանէին Կոզեռն»:

Ահա այդ գիտուն վարդապետն է, որ իր կյանքի վերջին տարիները անց է կացրել Երևանում և այդտեղ էլ ստեղծագործել»» (Թ. Հակոբյան, «Երևանի պատմություն»):

Եթե վերը բերված հիմնավորումներից ելնելով միայն եզրակացրինք, որ Հովհաննես Կոզեռնը ապրել և գործել է այս անապատում, ապա մյուս մեծանուն դեմքերի այս վայրում լինելու մասին առավել հստակ վկայություններ կան:

ՍԲ. ԱՆԱՆԻԱՅԻ ԱՆԱՊԱՏԸ 15-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Այսպես, 1409 թվականին Անանիայի անապատում հանգրվանել են նաև մեր այլ մեծանուններ՝ «տիեզերալույս վարդապետ, եռամեծար, երիցս երանեալ» սբ. Գրիգոր Տաթևացին մեծահամբավ այլ սբ. այրերի հետ, որոնց մեջ՝ նաև Առաքել Սյունեցին. Մեծոփա վանքից Տաթև վերադառնալիս այցելում է այս անապատը և սբ. Անանիայի գերեզմանի վրա վարդապետական գավազան է շնորհում Թովմա Մեծոփեցուն և այլ վարդապետների:

«Երբ Տաթևացին իր աշակերտների մի մասի հետ գալիս է Քաջբերունիք, Թովման ավելի քան մի տարի ևս լսում է սիրելի ուսուցչին Մեծոփա վանքում և նրանից վարդապետական գավազան և իշխանություն ստանում: Դա տեղի է ունե-

նում 1409թ. Երևանում՝ սբ. Անանիա առաքյալի անապատում, որը գտնվում է քաղաքի հյուսիսում՝ այգիների մեջ, Հրազդանի ձախ ափին, Կոզեռն բլրի ստորոտում (այժմ Թումանյան և Մոսկովյան փողոցների խաչմերուկում, սբ. Զորավոր եկեղեցու տեղում): Նոյեմբերի վերջերին ամենայն հայոց բաբունապետ Գրիգոր Տաթևացին, Սաղմոսավանքի և Եղվարդի դպրոցների բաբունապետներ Հակոբ և Սիմեոն վարդապետների, Առաքել Սյունյաց եպիսկոպոսի, Հովհաննես Մեծոփեցու, Գալուստ Վանանդեցի վարդապետի, Քաջբերունիքից եկած և Տաթևացուն ուղեկցող այլ վարդապետների, եպիսկոպոսների, աշակերտների, Երևանի վանքերի ու եկեղեցիների միաբանների ու բնակիչների ներկայությամբ, մեծ հանդիսավորությամբ և շուքով «գաւազան իշխանութեան» շնորհեց Թովմա Մեծոփեցուն, Մկրտիչ Նահապետենցուն, Կարապետ Խառաբաստեցուն, Մկրտիչ Օրբելյանցին, Մկրտիչ Հողձեցուն, Սարգիս Մեծոփեցուն և այլոց» (Ա. Մաթևոսյան, «Մեծոփա վանքի գրչության կենտրոնը»):

Ստանալով վարդապետական գավազան և իշխանություն՝ Թովմա Մեծոփեցին իր վարդապետ եղբայրներից ոմանց հետ միաժամանակ մնում է սույն անապատում:

«Երևանում Թովմա Մեծոփեցին Գալուստ վարդապետին և Սիմեոն գրչին ընդօրինակել է տալիս Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը», որն ավարտվում է 1410թ: Ընդօրինակությանը մասնակցում է նաև ինքը՝ «Պիտականուն վարդապետս Թովմա ստացա զերկրորդ հատորն «Քարոզգրոցս»... յամի թուականութեան մերս տումարի ՊԾԹ (1410)- երրորդի բազում աշխատութեամբ եւ չարչարանաւք... ի գաւառիս Այրարատեան, յանապատիս Երեւանոյ, առ դրան սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ, ձեռամբ երախտաւորի... Գալուստ վարդապետի... եւ Սիմէօն կրօնաւորի: Եւ մասն ինչ ես՝ տրկարս, հոգով եւ մարմնով գծագրեցի, ի յուսումն վարդապետաց եկեղեցւոյ»: Սկզբի մասն ընդօրինակել է Գալուստ վարդապետը 1409թ.: Մյուս կեսի գրիչ Սիմեոնը վախճանվում է ձեռագիրն ավարտելուց հետո: Ի դեպ, սա Երևանից մեզ հասած հնագույն ընդօրինությունն է: Այդ թվականին պետք է դնել նաև Թովմա Մեծոփեցու դասընկեր Մկրտչի ընդօրինակած Հարցմանց գիրքը, որին օգնել է Թովմա Մեծոփեցին» (նույն աշխատությունը):

Մեծոփեցին, հետագայում դառնալով Մեծոփա վանքի վանահայր, մեծ համբավի է արժանանում իր սրբակենցաղ վարքի, պատմագրական աշխատությունների, քարոզչական և ուսուցչական անդուլ գործունեության համար: Սակայն նրա հիշողության մեջ միշտ վառ է մնում սուրբ Անանիայի անապատում իրեն վարդապետական աստիճանի արժանացնելու օրը:

«Արդեն Մեծոփա վանքում Թովմա վարդապետը Հովհաննես կրոնավորի և Հակոբ Դպրի հետ ընդօրինակում է Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» մյուս հատորը՝ «ի յօգուտս խոնարհ և հեզ գրոց աշակերտեալ անձանց»: Հիշատակարանում պատմում է, որ ինքը Արարատյան գավառում վարդապետական աստիճան է ստացել Տաթևացուց» (նույն աշխատությունը):

Կարծես Նախախնամության կամոք էր սբ. Գրիգոր Տաթևացու այս անապատ գալը և դրանից հետո նրա արագահաս վախճանը արդեն Տաթևի վանքում, որը կարծես խորհրդանշում էր իր ժամանակվա մեծ զարթոնքի ավարտը և սկիզբը իրեն հետևող երկդարյա խավար շրջանի: Սակայն կյանքի մայրամուտին սուրբ Անանիայի անապատում իր գտնվելն էլ անխորհուրդ չէր, քանզի նա այստեղ կարծես թե ցանեց իր հոգևոր սերմերը, որոնք պիտի ծլարձակեին և պտղաբերեին մոտ երկու դար հետո սույն անապատում, հանձինս իր հոգևոր ժառանգ Մովսես Տաթևացու, ինչի մասին և կխոսվի ստորև:

ՏԱԹԵՎԱՑՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՏԱԹԵՎԱՑԻ

Սուրբ Գրիգոր Տաթևացուց հետո հոգևոր կյանքը սկսեց մեծ անկում ապրել, և 15-րդ դարի կեսերից մինչև 17-րդ դարի սկիզբը Արևելքի համար համարվեցին «խավար դարեր»: «Երբ արևմուտքն իր վերածնունդն էր ապրում վերոհիշյալ դարերում, մեզանում էլ այդ ժամանակ չէին պակասում գործիչներ և գրիչներ: Սակայն ամբողջ արևելքը մի խավար շրջան էր բոլորում. պատերազմները, կեղեքումները, հալածանքները ցամաքեցնում էին ժողովուրդների տնտեսական և հոգևոր աղբյուրները: Զենք հանդիպում այլևս Տաթևի և այլ վանքերի արդյունավոր վարդապետներին, չկան քաղաքական կամ հասարակական մեծ առաջնորդներ: Տիրում էր տնտեսական, իմացական ու կենցաղային մեծ անկում» (Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, «Հայազգի սուրբեր»):

Եվ արևմուտքի վերածննդի այդ լուսավոր շրջանը տեսնող Սիմեոն Լեհացին էլ, սքանչանալով նրանց ուսումնատենչությամբ և աստվածապաշտությամբ, ասում է մեզ համար խավար դարձած այդ դարերում տիրող վիճակը. «Իսկ մեր ազգը շատ է անտարբեր դարձել և Աստծո պատվիրանը մոռացել, քանի որ Աստծո անունը ևս երբեք չենք հիշում, որովհետև ընավ չունենք ուսման սեր, որի համար և մերոնք զավակներին թողնում են անձնապաստան ու անփույթ, իսկ նրանք մեծանում են որպես պախարներ՝ տգետ և հիմար լինելով ի մեղս ծնողների և ի նախատինս իրենց: Այդ պատճառով նվազելով պակասեցին և ջնջվեցին կարգավորներն ու իմաստունները մեր ազգից, իսկ որոնք այժմ կան՝ ամաչում եմ կարգավոր կոչել նրանց» (Ս. Լեհացի, «Ուղեգրություն»):

Եվ ապա մանրամասն պատմելով նրանց առաքինությունների մասին, նորից դառնորեն անդրադառնում է մեր ազգի վիճակին. «Ուրեմն, վա՜յ և եղուկ հույլ ու ծույլ իմ անձին, որ մեր ազգի մեջ կա [մարդ], որ երկու, երեք տարով եկեղեցու շեմ չի կոխել, իսկ սպիտակած մազերով ոմանք Հայր մեր-ը չգիտեն, ուր մնաց՝ Հավատամքը կամ այլ բան, նաև երեսներին խաչ չեն հանում, իսկ Պողոսն ասում է, թե՝ «Հույլերի ու ծույլերի համար փակ են արքայության դռները» (նույն աշխատությունը): Եվ ասում է, որ այդ ժամանակ հայերը իրենց արատավոր կենցաղավարությամբ կորցրել էին իրենց հանդեպ ամեն մի հարգանք ու ակնածանք և բոլոր ազգերի աչքից ընկել էին: Այնինչ, իր իսկ վկայությամբ, մինչև այդ խավար շրջանը այդպես չի եղել:

«Մեզ ասացին նաև, որ առաջ խիստ պատվում էին հայ ազգին՝ իբրև Աստծո սրբերի, այլև ուխտավորների հին հաղուստը պատռում էին և միմյանց պարգև ու ընծա տալիս: Իսկ այժմ այդպես չէ» (նույն աշխատությունը):

Սակայն Մաղաքիա Օրմանյան պատրիարքը այդ անկման պատճառաբանումները բերելով՝ հորդորում է շատ խստապահանջ դատաստան չանել՝ հաշվի առնելով այն կացությունը, որ տիրում էր այդ շրջանում. «Արևելքից և հարավից վրա էին հասել խիստ հալածանքներ, որ իր վրա էր կրում արևելյան քրիստոնեությունը: Պետք է հիշել այն մտավորական խավարը, որի ներքո ճնշվում էր քրիստոնյա ժողովուրդը իրեն տիրապետողների կամքով: Վերջապես պետք չէ մոռանալ այն ահագին զոհողությունները, որ արևելյան քրիստոնյաները պարտավոր էին հանձն առնել՝ մինչև իսկ իրենց նյութական գոյությունը պահպանելու համար» («Ազգապատում»):

Ինչպես ասացինք, սբ. Գրիգոր Տաթևացուց հետո, որը մեր եկեղեցու վերջին կանոնակարգված սուրբն է, համարյա երկու դար հոգևոր մեծ անկում ապրեցին մեր եկեղեցին և ամբողջ արևելյան քրիստոնեությունը: Այս անկումը կասեցվեց և Հայաստանում մի նոր հոգևոր զարթոնքի սկիզբ դրվեց մի այլ Տաթևացու՝ Մովսես Հայրապետի ու նրա համախոհների և հետնորդների կողմից:

Եվ ինչպես որ հնում Աստված Իսրայելին հոգևոր և քաղաքական երկարատև անկումից հանելու համար ասպարեզ էր հանում ընտրյալ մարդկանց, ինչպիսիք էին Մովսեսը, Գեդոնիելը, Բարակը, Գեդեոնը, Սամսոնը և այլոք, և նրանց ձեռքով

ազատագրում Իսրայելը, այդպես էլ այս երկարատև, երկդարյա խավարը Հայաստանում փարատելու համար Աստծո կամոք ասպարեզ եկավ Մովսես Տաթևացին, որը և արժանապես կոչվեց «Մայր Աթոռի և արևելահայության զարթոնքի նախահայր»:

«Այս բոլոր դժվարություններին հակառակ, հայ ազգը նորից Արևելքի մեջ առաջինը արթնության և հարության նախաքայլն անելու պարծանքն ունեցավ և հաստատամիտ ճիգերով աշխատեց այդ աղետալի կացությունից դուրս գալ: Ոչ մի քաջալերող քաղաքական փոփոխություն, ոչ մի ոգևորության պատճառ չկար: Բայց հուսահատ անելու չափ ծանր պարագաների ներքո էլ ետ չկանգնեց իր ճիգերից և շարունակեց ձեռք կարկառել ամեն կողմ, որտեղից զարգացման և լույսի ու փրկության հույսի ամենափոքր նշույլ էր տեսնում: ...Եվ որպես առաջադիմասեր և ուղղամիտ գործիչների գլուխ պիտի հիշենք Մովսես Գ կաթողիկոսին [Տաթևացի]» (Օրմանյան, «Հայոց եկեղեցին»):

«Նրա կաթողիկոսությունը Հայ Եկեղեցու համար դարագլուխ է կազմում, և իրոք էլ նրանով է փակվում այն աղետալի և եղկելի շրջանը... Այս կետից սկսելով՝ կերպարանափոխ է լինում Հայոց հայրապետության վիճակը...

... Մեծագույն և բացառիկ պատիվ է արել և անում նրան եկեղեցին՝ նրա անունը հանապազօր հիշելով Պատարագի մեջ, եռամեծ հովվաց և հովվապետաց կարգում, և կցելով նրան մի ուրիշ լուսավոր անվան՝ զույգ հիշատակում է անում Գրիգոր և Մովսես Տաթևացիների անունները, քանզի Մովսեսն էլ Գրիգորի համանման՝ եղավ լուսատու տանս Արամյան, թեև ոչ՝ տոնացույցը, ո՛չ էլ հայսմավուրքը տակավին չեն արձանագրել նրա անունը» (Օրմանյան, «Ազգապատում»):

Նրա մասին բազում հիացական խոսքեր է ասվել թե՛ իր ժամանակակիցների և թե՛ հետևորդների կողմից:

«Նա՝ Մովսեսը, շատ խոնարհ ու հեզ էր, առաքինի, սուրբ, և ընտիր, որ առանց ութ կանոն սաղմոսի ոչ մի օր չէր անցկացնում, ոչ մի ժամ պարապ չէր մնում այլ ցերեկ ու գիշեր հսկում ու տքնում էր աղոթքներով՝ անձաձիր ոտնկացությամբ» (Սիմոն Լեհացի «Ուղեգրություն»):

«Նա (Մովսես Տաթևացին) եղավ ջահը ուղիղ վարդապետության Հայոց Աշխարհի» (Հայր Միքայել Չամչյանց):

«Հայ եկեղեցու և ազգի իսկական վերազարթնումը սկսվեց Մովսես կաթողիկոսով, ուստի միջնադարից դուրս գալուց հետո արդի ժամանակների մեր երախտիքին արժանի և մեծ դեմքերի շարքը բացում ենք իրենով, որը թեև ամեն ինչով արժանի էր տոնելի սրբոց շարքն անցնելու, բայց, դժբախտաբար, չի անցել. այնուհանդերձ գեթ արժանի է եղել Սուրբ Պատարագի մեջ իր մնայուն տեղը գրավելու «Գրիգորի եւ Մովսէսի Տաթեւացեացն» հիշատակությամբ» (Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, «Հայազգի սուրբեր»):

Մովսես Տաթևացու, նրա աշակերտների՝ Փիլիպոս Սքանչելագործի և այլոց, նաև Տաթևացու ընկերակից Պողոս Մոկացու և Տաթևի «Հարանց անապատի» հայրերի՝ սրբոց դասում չկարգվելը պայմանավորված է եղել զուտ այն պատճառով, որ սբ. Գրիգոր Տաթևացուց հետո, այդ երկդարյա «խավարի» շրջանում սրբոց կարգին դասելու կանոնակարգը մոռացվել, անտեսվել և կորել է՝ դրա չկիրառման և համապատասխան անձանց բացակայելու հետևանքով:

Իսկ վերը նշված այրերը, ըստ պատմիչների, բոլոր արժանիքներն ունեին սրբոց շարքում դասվելու: Սակայն, ի դեմս Մովսես Տաթևացու, որի ննջման 370-ամյակը նշվեց 2002թ. մայիսի 14-ին, հոգեհանգստյան Սուրբ Պատարագի հանդիսավոր արարողությամբ, հիշվեցին նաև մեր ազգի և եկեղեցու այս բոլոր այրերը: Հուսով ենք նաև, որ ամեն տարի մայիսի 14-ին Զորավոր եկեղեցում, Սուրբ Պատարագի արարողությամբ, կհիշվեն այդ «մեծ զարթոնքի» երախտավորները. «Ով կատարում է սրբերի հիշատակը առանց սնափառության, համարելով, որ այդ անում է ըստ Աստծո պատվերի, այլ ոչ թե ինքնակամ, այդպիսին դառնում է սրբերին մասնակից և վարձ ստանում նրանց Տիրոջից» (սբ. Հովհան-

նես Գազացի): Խորհրդանշական էր նաև Բյուրականի աստղադիտարանի այն տեղեկությունը, որ արեգակնային համակարգի վեց մոլորակներ 2002 թ. սույն օրը՝ մայիսի 14-ին, մի գծի վրա շարվեցին, որը «մոլորակների շքերթ» է անվանվում: Եվ կարծես, թե այդ ոչ բանական լուսատուներն էլ այդ օրը հանդիսավորությամբ պատվեցին այս բանական լուսատուներին:

Մովսես Տաթևացին հայոց մեծագույն վարդապետների ուղղագիծ ժառանգորդն է:

Առաքել Դավրիժեցին այսպես է ներկայացնում այդ «ծննդաբանությունը». «Նախ եռամեծ վարդապետ Մխիթարը, որ մականունով Գոշ է կոչվում, նույնի աշակերտ Հովհաննեսը, որ Վանականն է, նույնի աշակերտ Վարդանը, նույնի աշակերտ Ներսեսը, նույնի աշակերտ Եսային, որ Նիչ գավառից է, նույնի աշակերտ Գրիգոր Տաթևացին, նույնի աշակերտ Դանիել Ճգնավորը, նույնի աշակերտ Հովհաննես Համշենցին, նույնի աշակերտ Թորոսը, նույնի աշակերտ Գրիգոր Տարոնացին, նույնի աշակերտ Հովհաննեսը, որ մականունով Շիրակ է կոչվում, նույնի աշակերտ Ղուկաս Կեղեցին, նույնի աշակերտ Սրապիոն Ուռհայեցին, որ եղավ Սուրբ Էջմիածնի կաթողիկոս, նույնի աշակերտ Գրիգոր Կեսարացին, նույնի աշակերտ Մովսես Սյունեցին (Տաթևացին), որ եղավ սուրբ Էջմիածնի կաթողիկոս և նրա նորոգող, նույնի աշակերտ Փիլիպոս կաթողիկոսը, նույնի աշակերտ ես՝ անարժան և մեղապարտ գրիչս Առաքել և իմ աշակերտ Մակվեցի Վարդանը» (Ա. Դավրիժեցի, «Պատմություն»):

Տաթևացին, դեռ իր վարդապետական շրջանում գյուղերն ու քաղաքները պտտելով, քարոզում և խրատում էր՝ ջանալով վերարծարծել բարոյական և քրիստոնեական կենցաղը, որ ընկած և աղավաղված էր ժամանակի ճախորդությունների և եկեղեցականության անկման պատճառով:

Սույն նպատակի համար, ըստ Օրմանյանի, նա կարևորագույն վայրերում դպրատներ էր բացում, շրջապատից տղաներ էր հավաքում և ուսուցիչներ կարգում:

«Մովսեսի եկեղեցական բարեկարգությունների թվում հիշվում է նաև այն, որ եկեղեցին պայծառացրեց հարմար և հաստատուն ժամակարգությամբ, ինչը ցույց է տալիս, որ հասարակաց աղոթքի կարգավորության մեջ էլ Մովսեսի հաստատած կանոնների հետքը պետք է տեսնել: Սակայն չենք ուզում եզրակացնել, թե Մովսեսը նոր կարգավորություններ անելու մտադրություն է ունեցել: Նա աշխատել է միայն խաթարված և խանգարված կարգերը խնամքով իրենց նախկին վիճակին դարձնել» (Ազգապատում, 1658):

Նրա գթասրտության փառքը մինչև Հռոմ էր տարածվել: Կարդինալ Ուբալդինոսը հիշատակում է, որ Մովսես Տաթևացի կաթողիկոսը ազատեց թուրքերի կողմից գերված 500 հայերի: Եվ ապա Էջմիածնի ունեցվածքի վրա ավելացնելով նաև մելիքներից ու պարոններից հավաքած հարկը՝ գերությունից ազատում է ևս չորս հազար հայերի: Նա իր գահակալության շրջանում կարողացել է հետ գնել նաև գրավ դրված եկեղեցական սպասքն ու սրբագործված առարկաներ: Իր ազգանվեր և եկեղեցաշեն գործունեության ժամանակ կրում էր նաև մեծ հալածանքներ թե՛ իր նախորդ Մելքիսեդեկ կաթողիկոսից ու նրա աթոռակից Սահակից, թե՛ այլակրոն իշխանավորներից:

Մի անգամ Շահ-Աբասի մոտ ամբաստանում են Մովսես Տաթևացու աշակերտ Անդրեաս քահանային: Շահը նրա կյանքը փրկելու համար, առաջարկում է՝ դավանափոխ լինելով՝ հարել մահմեդականությանը: Բայց նա հրաժարվում է հավատն ուրանալ և սոսկալի չարչարանքների ենթարկվելով, ընդունում է նահատակության պսակը: Այդժամ շահին հայտնում են, թե ով է Անդրեասի դաստիարակը, և շահը հրաման է արձակում՝ կալանել Տաթևացուն:

«Սրա համար թագավորից հրաման եղավ զորականներ ուղարկել, Մովսեսին բռնել և կապանքներով բերել թագավորի մոտ: Զորականները գնացին, Մովսես վարդապետին բռնեցին,

սրա հետ՝ նաև Պողոս վարդապետին: Զուգափայտից օղակ սարքեցին, դրին նրանց պարանոցները և երկաթե ոտնակապեր՝ ոտքերը, ձյուն-ձմեռվա ցուրտ օրերին երկու վարդապետներին բերին շահի բանակը» (Ա.Դավրիժեցի):

Սակայն, ինչպես որ նրա բոլոր հակառակորդները Աստծո նախախնամությամբ վերացան ասպարեզից, այդպես էլ նրան շահի մոտ ամբաստանող Շահռուզ բեկը սրով սպանվեց շահի զորականների կողմից:

«Մովսեսը վախճանվեց 1632թ. մայիսի 14-ին, բայց ասված չէ, թե ինչ հանգամանքներում: Տարիքը չպետք է շատ մեծ եղած լինի... Հիսունին մոտ պիտի լիներ... Հիվանդոտ էլ չլինելու նշան են համարում նրա տոկուն և անխոնջ աշխատանքը մինչև կյանքի վերջը: Մի պատահական ծանր հիվանդություն տապալած կլինի նրան, երբ գործով կամ հանգստի նպատակով գտնվում էր Երևանում, Անանիայի վանքում՝ իր սիրեցյալ և նվիրական օթևանում: Երևանցիք, որոնց հետ անչափ սերտ կապված էր իր գործունեության առաջին օրերից սկսած, չպետք է ուզած լինեին մահվանից հետո էլ նրանից բաժանվել, քանզի թաղումը կատարվել է նույն քաղաքում, և նրա մասունքներն էլ ամփոփված են ժողովրդական գերեզմանատան մեջ՝ Կոզեռն բլրի վրա:

Նա ուներ հաստատուն և անվրդով ուղղափառ հավատք, ինչպես ընդունում և դավանում է Հայաստանյայց եկեղեցին: Իսկ նրա անհատական և առաքինական առավելությունների մասին խոսում են բոլորին սիրելի և պաշտելի դարձած իր գործերը, որոնցով բացառիկ կերպով բոլորի համար անձկալի եղավ և ընդհանուր միաձայնությամբ կաթողիկոսական աթոռ բարձրացավ:

Նրա մասին վկայված է նաև, որ «մաքրակենցաղ և սրբասուն էր, երկայնամիտ և ողորմած, որ զորավոր էր աստվածաշնորհ վարդապետությամբ և քաղցր քարոզությամբ, որով գիտեր հոգիներ շահել՝ «ուղղելով ի ճանապարհս արդարութեան»» («Ազգապատում»):

ՏԵՐ ՄՈՎՍԵՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեծահավատ, սրբասնունդ և բարեփառ մեր տեր Մովսես կաթողիկոսը Սյունյաց երկրի Բաղք գավառի, որ այժմ Աճանան է կոչվում, Խոտանան կոչված գյուղից էր: Դեռևս տասնհինգ տարեկան էր՝ ավել կամ պակաս, նրան քահանայության աստիճան տվին և օրհնեցին կուսակրոն աբեղա: Նրան բախտ վիճակվեց հանդիպել տիեզերալույս վարդապետ Սրապիոնին, որին առնչակից դառնալով՝ աշակերտեց նրան: Բայց Սրապիոնի վախճանը շուտ վրա հասավ. այդ ժամանակ տեր Մովսեսը դեռահաս էր: Բայց Սրապիոն վարդապետը մտքով նկարել և հոգով իմացել էր, որ տեր Մովսեսի վրա աստվածային շնորհք է երևում, որի համար սրտացավորեն հոգաց նրա մասին: Իր մոտ կանչեց իր ավագ աշակերտ կեսարացի Գրիգոր վարդապետին ու տեր Մովսեսին, և նրան հանձնարարելով՝ ասաց. «Սրան քեզ եմ հանձնում, որպեսզի իմ փոխարեն սրան հովվելով պահես, և հասցնելով արբունքի հասակի ու վարդապետական ուսման՝ տաս վարդապետական գավազան ու պատիվ, իսկ իմ օրհնությունը լինի քո և սրա վրա»:

Սրապիոնի վախճանից հետո տեր Մովսեսը մնաց Գրիգոր վարդապետի մոտ իբրև նրա աշակերտ: Տարիներ անց տեր Մովսեսը թույլտվություն խնդրեց Գրիգոր վարդապետից, որպեսզի գնա Երուսաղեմ ուխտի ու երկրպագության մեր Աստված Քրիստոսի մարդեղության վայրերը: Նա թույլատրեց, իսկ տեր Մովսեսը, գնաց հասավ Երուսաղեմ և Տիրոջ բոլոր մարդեղության տեղերին ուխտ արեց: Ապա այնտեղից գնաց Եգիպտոսի երկիրը և շրջեց ղպտիների վանքերն ու անապատները, որովհետև շատ վանքեր ու անապատներ կան, որտեղ բնակված են բազմախումբ միաբաններ կրոնավորական կարգերով ու դրվածքով, որոնք ամեն ինչով կարգավորված են եկեղեցիների, բեմատեղերի, զգեստների, խցակցության, կրոնավորական ժուժկալության և այլ ամեն բաների: Նրանց մեջ

շրջելով, հարցնելով ու տեսնելով՝ ամեն ինչին տեղեկանում էր. թեպետ ինքը՝ տեր Մովսեսը, այդ բաների նկատմամբ անհոգ ու անփույթ էր, բայց տնօրինող Սուրբ Հոգին ման տալով շրջեցնում էր այսպիսի կրոնավորական կարգերի մեջ նրան ուսուցանելու ապագա ժամանակների համար, որպես և պետք եկավ Մեծ անապատի կարգավորության ժամանակներում: Տեր Մովսեսը Եգիպտոսից դառնալով եկավ Երուսաղեմ և եղավ սուրբ Հարության տաճարի լուսարար:

Այդ ժամանակ պատահեց, որ պարոն Սարգիսը և տեր Կիրակոսը այնտեղ էին, որոնց մասին գրեցինք, թե եղան անապատի ու կրոնավորական կարգերի սկզբնավորողներ: Սրանք գտնվում էին Երուսաղեմում, շրջում էին այդ երկրում, հունաց վանքերում, Հորդանան գետի եզրերին, Փորձության լեռան վրա և որոնում էին ուշադրությունից զերծ ու անգայթակղիչ անապատի տեղ, բայց ըստ պատշաճի չէին գտնում: Այդ առթիվ տեր Մովսեսը ասաց. «Այդպիսի տեղ, որ որոնում եք, [հայոց] արևելյան երկրում շատերը կան, մանավանդ Սյունյաց աշխարհում, որոնց ես իսկն ականատես եմ. այն աշխարհում շատ ավելի պատշաճ է անապատ շինել, որովհետև բուն Հայաստանն է. վանքեր, գյուղեր ու քրիստոնյա ժողովուրդ շատ կան, ուստի անապատի բոլոր կարիքները կլրացվեն: Նաև ինքը՝ տեր Մովսեսը, հանձն առավ, որ երբ նրանք ժամանեն այն երկիրը և որևէ տեղ անդորրանալով գետեղվեն, որտեղ էլ ինքը՝ տեր Մովսեսը լինի, ամեն ինչ կթողնի այնտեղ, նրանց մոտ կժամանի և նրանց հետ կբնակվի իբրև միաբան: Արդ՝ այսպիսի հորդորող խոսքով նրանց ուղարկեց արևելյան վերին աշխարհը [Սյունիք], իսկ ինքը մնաց Երուսաղեմում: Սուրբ Գրիգոր եպիսկոպոսի, որ սուրբ Հակոբի առաջնորդն էր, հրամանով [Մովսեսը] գնաց Նվիրակության Երուսաղեմի համար և, քրիստոնյաներից մեծ քանակությամբ արդյունքներ հավաքելով, բերեց Երուսաղեմ՝ Գրիգոր եպիսկոպոսի առջև:

Ապա Երուսաղեմից ելավ, եկավ իր վարդապետ Գրիգոր

Կեսարացու մոտ, որը Կոստանդնուպոլսում էր, քանզի թագավորական հրամանով նստել էր իբրև քաղաքի առաջնորդ՝ պատրիարք կոչումով: Մի քանի տարի մնալով պարկեշտ և սրբակրոն վարքով՝ իբրև Գրիգոր վարդապետի աշակերտ՝ ոչ պերճապաճույճ և փափուկ հագուստով, ինչպես այդ ժամանակ ուրիշներն էին, այլ կոշտազգեստ էր, պահեցող, որ շաբաթ և կիրակի օրերն էր [պասը] լուծում նավակատիքի կերակուրներով՝ զերծ մսից ու գինուց, մշտապես սաղմոսերգող և պատարագամատույց:

Այս բանին հավանելով ու հաճելով, Կոստանդնուպոլսի ողջ ժողովուրդը՝ եկեղեցականներ, աշխարհականներ և երևելի մարդիկ, օրինակ՝ Շահին չալաբին, որ թագավորի արքունիքում նշանավոր մարդ էր, և ուրիշ շատերը: Նաև Արևելյան երկրի վաճառականները, որոնք պատահեցին Կոստանդնուպոլսում, մանավանդ ջուղայեցիներն ու գողթնեցիները, քանի որ գիտեին, թե Մովսեսը արևելյան աշխարհից է, ամենքը մոտենալով Գրիգոր վարդապետին՝ խնդրում էին տեր Մովսեսին վարդապետություն շնորհել:

Իսկ Գրիգոր վարդապետը ահարկու, շատ գոռոզ և դժվարահավան մարդ էր, բայց տեսնելով տեր Մովսեսի քաղցր, սրբասեր և պարկեշտ վարքը, նաև ժողովրդի վկայությունը, չեղավ չլսող, այլ ըստ նրա անձի և ողջ ժողովրդի վկայության՝ նրան վարդապետական դավազան տվեց մեծ հանդեսով: Այնուհետև տեր Մովսես վարդապետը բոլոր եկեղեցիներում անխափան, վճիտ ու պայծառ քարոզությամբ քարոզում էր Քրիստոսի Ավետարանը:

Տարիներ հետո Գրիգոր վարդապետի հրամանով Մովսես վարդապետը ուղարկվեց ինքնագլուխ քարոզությամբ շրջագայելու: Նա ելավ Կոստանդնուպոլսից, եկավ-հասավ Տիգրանակերտ քաղաքը, որտեղ էր Սրապիոն վարդապետի տապանը: Նրան սուրբ տապանի միջոցով համբուրեց և, նրանից օրհնություն առնելով, այնտեղից Վասպուրական [Վան] քաղաքով եկավ Թավրիզ և այնտեղից իր հայրենի աշխարհը՝

Սյունյաց գավառը, Տաթևի վանքը: Սրա գալստյամբ եղավ անպատմելի ուրախություն ամենքի համար՝ եկեղեցականների և աշխարհականների: Նրան առաջինը սիրով ընդունեցին Տաթևի վանքի միաբանները՝ եպիսկոպոսներ, աբեղաներ, բայց հետո ետ կանգնեցին նրանից, քանզի նրա քարոզությունը չընդունեցին: Այդ պատճառով Տաթևի վանքից դուրս գալով՝ գնաց Մեծ անապատը՝ Սարգիս եպիսկոպոսի և տեր Կիրակոսի մոտ ըստ իրենց նախկին ուխտադրության, որ Երուսաղեմում պայմանավորվել էին: Այնտեղ՝ անապատում, իր բնակության համար դադար առավ և ժամանակ առ ժամանակ շրջում էր քրիստոնյաների [հայերի] մեջ և քարոզում Աստծո պատվիրանը, վերստին վերադառնում անապատը որովհետև ինչպես որ ձուկը ջրից դուրս գալով՝ մոտենում է մեռնելու պահը և նորից ջուրն ընկնելով՝ կենդանանում է, այնպես էլ սա՝ անապատից ելնելով և անապատ մտնելով:

Իսկ Մովսես վարդապետի քարոզությունը ողջ ժողովուրդը խնդությամբ էր ընդունում, սիրով էր կատարում և ուրախությամբ փառավորում էին Աստծուն՝ մարդկանց այդպիսի շնորհներ տվողին: Բայց գավառի եպիսկոպոսները և վանքերի աբեղաները չէին ախորժում Մովսեսի քարոզությունը, որովհետև Մովսես վարդապետը ինչպես ինքը մերկ էր ամեն աշխարհիկ նյութականությունից, պասով, սրբությամբ և կրոնական վարքով էր ապրում ըստ գրքերի պատվիրանների, սույնպես էլ քարոզում էր, որ բոլոր վանականները լինեն: Իսկ նրանք, արհամարհելով նրա խոսքերը, չընդունեցին, որովհետև հայոց ազգի բոլոր վանքերում յուրաքանչյուր սեպագլուխ ուներ իր սեփական հարստությունը՝ այգի, ծաղկաստան, փեթակ, տուն, մառան, ամբարներ, եկամուտներ: Նաև ընդհանուր վանքի եկամուտը բաժանում էին իրար մեջ: Եվ այդ ամենը ծախսում էին իրենց, ազգականների, իրենց հաճելի մարդկանց կարիքների համար: Եվ Աստծուն նվիրված վայրերը, որոնք սքանչելագործ սրբերի և Աստծու շնորհները կրող հրաշքների բնակարաններ են, լցված էին

կանանցով, տանտիկիններով և իրենց ազգականներով:

Բնավ չգիտեին, որ կրոնավորը պարտավոր է վեղար ու փիլոն կրել, կամ կոշտ ու բրդյա հագուստ հագնել, այլ որպես աշխարհական և մարմնավոր իշխաններ՝ թանկագին հագուստներով պճնվում էին, անդրավարտիք, կապա, թանկագին գլխարկ գլուխներին և թիկնոց էին առնում իրենց վրա: Նաև չէին համարում, թե վանականները պարտավոր են պասով, ծոմական տքնությամբ կյանք վարել, այլ ամբողջ տարին անխտիր ուտիս ճաշեր, միս էին ուտում և գինի խմում:

Այդպես էլ գյուղական քահանաները անունով էին միայն քահանաներ, բայց ոմանք ստանձնում էին մելիքության, ոմանք՝ տանուտերության իշխանություն, ոմանք պոռնիկներ (չնացող)ու երկկանայք էին, ոմանք միանում էին այլազգի իշխաններին և դառնում նրանց չար գործերի արբանյակներ, քրիստոնյաների մատնիչներ: Ոմանք մարմնական արհեստներով և հողագործությամբ էին զբաղվում իբրև աշխարհականներ՝ բոլորովին լքելով ժամն ու Պատարագը: Աղոթքի ժամին եկեղեցի չէին գնում, և գյուղերում ժամկոչի ձայն չէր լսվում. նրանցից լրիվ վերացել էր քահանայության շնորհքը, բայց տակավին իրենց քահանաներ էին անվանում և քահանայական գործ էին անում ոչ իբրև քահանաներ, այլ իբրև արհեստավորներ՝ իրենց մարմնական վարձի համար:

Ոչ միայն գյուղական քահանաներն ու աբեղաներն էին ըստ ասածիս անուղղա կարգուկանոնով թափառում, այլև կաթողիկոսները, որովհետև մեկը չէր, այլ երեք և չորս կաթողիկոսներ և այն էլ՝ փառամոլության ու ագահության պատճառով իբրև մաքսավորներ կապալով ու հարկով պարսից թագավորից գնում էին կաթողիկոսական իշխանությունը և սուրբ աթոռ Էջմիածինը: Եվ ժողովրդի մեջ շրջագայելիս թագավորական ծառա և այլազգի զորականներ էին մանածում իրենց հետ և ժողովրդի տուրքը, հասը ճշտիվ և ուժի բռնությամբ առնում էին ինչպես Հեղիի որդիները: Եվ, ինչպես իրենք՝ կաթողիկոսները, դրամով ու կաշառքով կաթողի-

կոսական աստիճան էին ստանում, այդպես էլ իրենց ձեռնադրած եպիսկոպոսները, քահանաները տգետ, խոտան, անպետք ըստ Սաղմոսի, որոնք որովայնի պաշտոնյաներ էին (Հռոմ. ԺԶ 18), մշտապես գինարբուքի մեջ շրջում էին գուսաններով ինչպես մարմնավոր իշխաններ՝ առավոտից մինչև երեկո, հետևում էին կատակների, լկտի խոսակցությունների և դատարկամտության:

Եվ սրանց բոլորի պատճառը ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ հեռացումը Աստվածաշնչից և Աստծո երկյուղից. բնավ գրքեր չէին կարդում, աստվածային մատյանները փակվել ու լռել էին, որովհետև խափանվել էր Աստվածաշնչի ընթերցումը, որ արհամարհված էր նրանց աչքում. հողով ու մոխրով պատված՝ ընկած էին որևէ անկյուն, որովհետև ըստ Տիրոջ խոսքի՝ ո՛չ [Սուրբ] Գրքերն էին ճանաչում, ո՛չ էլ այդ Գրքերի զորությունը (Մատթ. ԻԲ 29):

Արդ՝ եթե եկեղեցականները այսպես էին, ի՞նչ ասեմ աշխարհականների մասին, որոնք բնավ չգիտեին, թե քրիստոնյաները պարտավոր են խոստովանել, հաղորդվել, կամ ամեն օր աղոթատեղ այցելել, նաև պասը ձեթով ու գինով փչացնում էին. ոմանք կնաթող էին, ոմանք՝ երկկին, չհաս և ազգապղծության մեղքերով շաղախված:

Իսկ եկեղեցիներն ու վանքերը՝ բոլորն անշուք ու անպատիվ, զարդերն ու սպասքները՝ բոլորովին կողոպտված, մինչև իսկ սուրբ Սեղանը՝ ամենևին մերկ ու բաց: Երկար ժամանակ փակված դռներով, խավար ու անլույս, պաշտամունքից ու Պատարագից լուռ, շինվածքը ավերված ու խախտված, տանիքն ու պատերը իբրև անտեր ու այրի՝ զրկված փեսայից, օտարացած որդիներից, նստած թախծոտ ոգով ու անմխիթար լալիս էին մարդու երեսին:

Արդ՝ բազմապատիկ ավելի, քան ինչ որ շարադրեցինք, աղավաղված ու եղծված էր բարեկարգությունը հայոց Վերին աշխարհից: Դրա փոխարեն արձանացել ու արմատացել էր անկարգությունը: Այդ պատճառով վշտանում և հոգու չափ

ցավում էին այս տգետ մոլորությունների վրա սուրբ վարդապետներ Մովսեսն ու Պողոսը: Պողոս վարդապետը Մովսեսից քիչ ժամանակ ավելի առաջ էր եկել Վերին երկիրը [Սյունիք] և իր մենակության պատճառով հակառակորդները ճնշում էին նրան, իսկ երբ Մովսես վարդապետը եկավ, իրար զորավիգ լինելով՝ բոլոր գավառներում համարձակ քարոզում էին: Այս երկու վարդապետները՝ պարոն Սարգիսը և տեր Կիրակոսը, հիշված մյուս մարդկանցով, որոնց Մեծ անապատի գլխում հիշատակեցինք, նախ՝ անապատի ու կրոնավորության այն ամեն կարգն ու դրվածքը սահմանեցին, որոնք գրքերի ընթերցումով գտան և որոնք Մովսես վարդապետը ղփթինների անապատում տեսել ու սովորել էր, ապա նրանք անապատում մնալով աղոթում էին աշխարհի փրկության համար և նույն աղոթքով նպաստում էին վարդապետներին՝ խնդրելով Սուրբ Հոգուց օժանդակելու նրանց կենաց խոսքի քարոզչության մեջ: Իսկ երկու վարդապետները՝ Պողոսն ու Մովսեսը, հավատքի ամոլներ (լծակիցներ) լինելով՝ շրջեցին մեր Արևելյան աշխարհի բոլոր գավառները, ամենքին քարոզում էին ճշմարտությունը, շինում էին եկեղեցիներ, կարգում էին քահանաներ, հաստատում էին դպրոցներ, սովորեցնում էին մանուկներին, որովհետև առաքելաբար հետիոտն շրջում էին՝ որևէ մեկից ոչինչ չվերցնելով, բացի ուտելիքից, իսկ ամբողջ շաբաթը պաս էին պահում. միայն կլոր տարին շաբաթ և կիրակի օրերն էին Նավակատիքի կերակուրներով ճաշակվում, իսկ գինուց ու մսից ամենևին հեռու էին:

Իսկ Վերին աշխարհի [Սյունիքի] քրիստոնյաները [հայերը], լսելով նրանց ճշմարիտ քարոզները և տեսնելով նրանց գործերը բոլորը ետ կանգնեցին իրենց թյուր ճանապարհից, հնազանդվեցին նրանց կարգերին ու սահմանադրությանը՝ իշխաններ, եպիսկոպոսներ, քահանաներ և նշանավոր մարդիկ բոլոր ռամիկներով հանդերձ: Բայց շատ անվանի մարդիկ՝ եկեղեցականներ ու աշխարհականներ, ոչ միայն չընդունեցին նրանց քարոզները, այլև հակառակվում էին, կենսամոլ

ու խաբեբա անվանում, և նրանց սահմանած կարգերը իրենք և իրենց արբանյակներն էին խանգարում, ուր որ գնում ու կարողանում էին:

Բայց հակառակության այս գործն անում էին թյուր ու օրինազանց մարդիկ, որոնց հաճելի չէին ճշմարտության ճանապարհները. վարդապետների մասին չարահամբավ լուրեր էին տարածում և նրանց ամբաստանում: Նրանց ամբաստանության լուրը մինչև անգամ հասավ երկրի այլազգի իշխաններին՝ խանին ու սուլթանին, մանավանդ Մելքիսեթ կաթողիկոսին, որը թագավորական բռնությամբ էր վարում կաթողիկոսության իշխանությունը: Որովհետև ինքը նույնպես ուղիղ ճանապարհի վրա չէր, այդ պատճառով էլ տեղի էր տալիս այդպիսիների ամբաստանությանը և նրանցից նյութ առնելով՝ նեղում էր վարդապետներին: Շատ անգամ կաթողիկոսը պատահելով այստեղ-այնտեղ՝ նրանց սահմանած կարգը խափանում էր և նրանց կողմից առաջ քաշված անձանց ետ էր մղում, իսկ նրանց կոպիտ խոսքերով սպառնական պատգամներ էր ուղարկում:

Նաև վարդապետները հանդիպեցին կաթողիկոսին և նույն անարգալից խոսքերը լսեցին նրանից, որովհետև թագավորական իշխանությամբ էր խրոխտանում վարդապետների վրա. և այնքան վտանգեցին վարդապետներին, մինչև որ Պողոս վարդապետից ստորագրություն առան, որ այլևս չի շրջի քրիստոնյաների [հայերի] մեջ և չի քարոզի...

Իսկ երբ այնպես եղավ, որ Պողոս վարդապետին մի կողմ մղեցին և Մովսես վարդապետին միայնակ գտան, սկսեցին սաստիկ մրցանքով մաքառել նրա դեմ և նրան այնքան նեղը դրեցին, մինչև որ Մովսես վարդապետն իր փիլոնը, գավազանը և գորգը ուղարկեց Մելքիսեթ կաթողիկոսին՝ ասելով. «Որովհետև չես կամենում մեր քարոզությունը, ահա և առ քեզ մեր իշխանությունը, իսկ մենք լռելով կդադարենք քարոզելուց, և եթե դրա առիթով որևէ մեղք լինի, դու պատասխան կտաս Աստծուն»: Իսկ բարիքներ կամեցող Աստված, որ ամեն ինչ տնօրինում է, Մովսեսի արածը հաճելի չարեց Մելքիսեթի խորհրդակիցներին, դրա համար համոզեցին Մելքիսեթին՝ Մովսեսի իշխանությունը չառնել, այլ իր գավազանն իրեն վերադարձնել և հրաման տալ քարոզության: Մելքիսեթն այդպես էլ արեց:

Թեպետ Մելքիսեթը Մովսեսին քարոզելու հրաման տվեց, բայց նենգելուց չդադարեց, քանզի անընդհատ ճնշում էր, դատափետելով պարտավոր էր դարձնում ու զրպարտում, ինքն ու իր համախոհները անխնայորեն նրա վրա նեղություններ էին բարդում:

Մովսես վարդապետը դրանց արարքներից զզված, մինչև հոգու խորքը դառնացած, ձանձրացած, սրտով վհատված ու լքված՝ մտածում էր Տիրոջ խոսքը, թե՝ **«Երբ ձեզ հալածեն այս քաղաքից, փախեք մյուսը»** (Մատթ. Ժ 23): Մտածեց հեռանալ Արևելյան աշխարհից, և գնալ Արևմտյան աշխարհը և այնտեղ գտնված քրիստոնյաներին քարոզել: Այս դիտավորությամբ ելավ, եկավ Երևան քաղաքը, որպեսզի այնտեղով անցնի, գնա Թեոդուպոլիս, որ Կարին քաղաքն է:

Այդ ժամանակ Երևան քաղաքի և Արարատյան աշխարհի մեծ ու հզոր իշխանն էր Ամիրգունա խանը, որը պատահմամբ ու դիպվածով տեսավ Մովսես վարդապետին. խանը սրա մասին հարցրեց իր առջև ծառայող քրիստոնյաներին, և սրանք պատասխանեցին որտեղից և ինչպիսին լինելը: Եղավ, որ մի անգամ էլ խանը պատահեց վարդապետին, և որքան խոսում էր վարդապետը, խանին հաճելի էր թվում, որովհետև Աստծու խնամքը Իր ծառային բռնավորի առջև շնորհալի է ցույց տալիս: Խանը Մովսեսին չթողեց գնալ Արևմտյան աշխարհը, այլ այնտեղ՝ Երևան քաղաքում պահեց: Օրավուր խանը գալիս և լսում էր [Սուրբ] Պատարագը, գալիս էր ժամակարգության այլ արարողությունների պահերին և խոսում էր նրա հետ երբեմն իմաստության, երբեմն հավատքի վերաբերյալ ու լսում վարդապետի պատասխանները, որոնք ախորժելի էին, հաճելի և լի՝ Աստծո շնորհներով: Նրա պարկեշտ վար-

քի համար խանը նրան սիրեց, այդ պատճառով նրան պահեց Երևանում՝ նշանակելով Կաթողիկէ եկեղեցում երեք տարի:

Վաղեմի ժամանակներից Երևանի հյուսիսային կողմի այգիների մեջ՝ սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի վրա, մի վայելուչ մատուռ կար շինված, որը ավերակ ու անմարդաբնակ էր. սրա համար խանը վարդապետին ասաց. «Տեսնո՞ւմ ես այս եկեղեցին, որ ամայի կանգնած է. այժմ լսիր ինձ ու մի՛ գնա ուրիշ երկիր, այլ սա՛ դարձրու քեզ բնակավայր և դադարիր այստեղ, որպեսզի իրար մոտիկությամբ ու տեսակցությամբ մխիթարվենք»: Նաև ողջ ժողովուրդը՝ քաղաքացիներ, վաճառականներ, աղաչելով նույնն էին խնդրում վարդապետից: Սրանց խոսքը հաճելի եղավ վարդապետին, և նա ձեռնամուխ եղավ շինելու այդ տեղը քրիստոնյա տեղացիների ու վաճառականների միջոցներով ու օգնությամբ, որոնք սիրահոժար տալիս էին ողորմության տուրք տեղի կառուցման և վարդապետի սիրո համար, որպեսզի վերջինս բնակվի իրենց մեջ: Այդ պատճառով շտապ շինեցին շուրջանակի պարիսպ, խուցեր, ժամատուն, սարավույթ և այլ շատ տներ: Վերջացնելով բոլոր շինվածքները՝ վարդապետն իր միաբաններով բնակվեց այնտեղ այն կարգուկանոնով ու դրվածքներով, որ կարգել էին Մեծ անապատում: Նրա մոտ հավաքվեցին բազմաթիվ միաբաններ, մենակյացներ, Սուրբ Գրքի իմաստուն ու սրբակյաց աշակերտներ: Մեծ և փոքր միասին սիրով ու խաղաղ մնում էին խցում՝ միշտ կատարելով աղոթքներ և Սուրբ Գրքի ընթերցում:

Սրա ուղիղ ուսմունքի և բարի կենցաղավարության համբավը աշխարհում ծագեծագ տարածվեց՝ Հունաստան, Քուրդիստան, Վրաստան, Պարսկաստան, որովհետև բոլոր երկրներից վաճառականներ էին գալիս այնտեղ, տեսնում էին ու համբավը տանում: Մելքիսեթ կաթողիկոսը, Մովսես վարդապետի այս բոլոր հաջողություններն ու առաջադիմությունը տեսնելով, չարությամբ լցվում, սրտում փոթորկվում էր, բայց չէր կարողանում Մովսեսին որևէ չար բան անել երկյու-



Երեւանի սբ. Անանիայի անապատի եկեղեցին
(Ղեւոնդ Ալիշան, «Այրարատ»)

ղելով՝ խանից որովհետև նա վարդապետին շատ էր սիրում:

Մելքիսեթ կաթողիկոսը իր խորհրդակիցներով արեց այս-պիսի խորհուրդ. սա ոչ թե Աստծո փառքի ու Մովսես վարդա-պետի օգտի, այլ իրենց շահի ու օգուտի համար էր, որպեսզի շատ ինչք ու արծաթ գումարվի իրենց: Սահմանեցին, թե սուրբ աթոռ էջմիածնում մյուռոնօրհնեք ենք անում նաև Մովսես վարդապետի ձեռքով, որպեսզի նրա համբավով շատ երկրներից բազմաթիվ մարդիկ հավաքվեն, որոնցից մեզ շատ ինչքի ու արծաթի շահ լինի: Այդ պատճառով Մելքիսեթ կա-թողիկոսի եպիսկոպոսներից ոմանք եկան Մովսես վարդապե-տի մոտ և նրան մեծարեցին Մելքիսեթ կաթողիկոսի խոսքով, որ գա էջմիածին և մյուռոնօրհնեք անի: Մովսես վարդապետն այդ ժամանակ տակավին եպիսկոպոսական աստիճան չուներ, այդ պատճառով հրաժարվեց՝ ասելով. «Ես եպիսկոպոսության աստիճան չունեմ, այդ իմ գործը չէ, այլ նրանց գործն է, որոնք եպիսկոպոս են»: Այս պատճառով Մելքիսեթ կաթողի-կոսն ասաց. «Եթե պատճառը եպիսկոպոսությունն է, ես իրեն եպիսկոպոս կօրհնեմ, որպեսզի պատրվակ չբռնի և գա մյուռոնը օրհնի»: Իսկ Մովսեսը հրաժարվում է եպիսկոպոսու-թյան աստիճանից՝ իրեն անարժան համարելով, բայց նրա աշակերտները, բոլոր քահանաներն ու ժողովուրդը թախան-ձում էին հանձն առնել եպիսկոպոսության աստիճանը, որի համար Մովսես վարդապետը համաձայնեց լինել եպիսկոպոս:

Ապա Մելքիսեթ կաթողիկոսը եկավ սուրբ առաքյալ Անա-նիայի դամբարանը, որտեղ Մովսես վարդապետի բնակու-թյունն էր, որը և անվանեցին անապատ. այնտեղ (Մելքիսեթը) ավագ երկուշաբթի օրը նրան օրհնեց եպիսկո-պոս: Ապա կաթողիկոսն ու վարդապետը բոլոր եկեղեցական-ները, աշխարհականները եկան էջմիածին և ավագ հինգշաբ-թի օրը մյուռոն օրհնեցին: Մյուռոնը օրհնելուց հետո շտապ ճանապարհեցին ժողովրդին, քանզի բազմաթիվ երկրներից ժողովուրդ էր եկել. սրանք սուրբ մյուռոնի և էջմիածնի օրհ-նությունը առնելով՝ գնացին իրենց տեղերը:

Իսկ ջուղայեցի վաճառականները հասնելով Սպահան քա-ղաքը՝ իրենց համազգայինների մոտ, ամենքին պատմեցին բարեվայելուչ արարողությունների մասին, որ տեսել էին Մովսես վարդապետից: Իսկ ջուղայեցիները՝ եկեղեցականներ ու աշխարհականներ, լսելով այդ՝ տենչում էին վարդապետի սիրուն և խանդակաթ սրտով փափագում էին նրա տեսու-թյունը: Նրանք պատրաստեցին նշանավոր մարդիկ՝ քահա-նաներ ու աշխարհականներ, և ուղարկեցին իբրև հրավիրակ Մովսես վարդապետի, որպեսզի գա Սպահան՝ իրենց մոտ: Նաև ջուղայեցիների գլխավորը՝ Քրիստոսի ողորմություն-ներին արժանի խոջա Նազարը, գրեց իր որդուն՝ խոջա Սաֆրա-զին, որ այդ օրերին Ատրպատական երկրում էր, մեծարել Մովսես վարդապետին Սպահանում: Նրանք եկան, Մովսեսին առան, տարան Սպահան: Եվ նա այնտեղ քրիստոնեական վարդապետությամբ և ավետարանական քարոզությամբ սփոփելով՝ մխիթարում էր նրանց և հաստատում քրիստո-նեական հավատքի մեջ ոչ միայն քաղաքի բնակիչներին, այլև ամբողջ շրջակա գավառին: Այնտեղ որոշ ժամանակ մնալով՝ մեծ փառքով փառավորվեց նրանցից, ապա այնտեղից վերա-դարձավ Երևան քաղաքը՝ իր տեղը:

Մինչ Մովսես վարդապետը անհոգ միամտությամբ մնում էր Երևան քաղաքում՝ իր տանը, Մելքիսեթ կաթողիկոսը նեն-գություն նյութեց նրա դեմ հետևյալ ձևով. մի թուղթ մեջ-տեղ հանեց իբրև ստացագիր, որտեղ գրված էր. «Ես՝ Մովսես վարդապետս, պարտք եմ Մելքիսեթ կաթողիկոսին հարյուր թուման, գնամ Սպահան, այնտեղից վերադառնամ, տամ»:

Այս թուղթը տարան Ամիրգունա խանի դիվանը և ճշտիվ պահանջում էին հարյուր թուման: Իսկ Մովսես վարդապետը ինչպես որ անպարտ էր, նույնն էլ պատասխանում է, թե ան-պարտ եմ դրանից, որովհետև այդ թուղթը ես չեմ տվել, այլ դավադրությամբ ու ինչ-որ հնարքով են սարքել այդ գրու-թյունը: Եվ թեպետ Մովսես վարդապետը բազում խոսքերով պատասխանում էր, սակայն փրկություն չէր լինում, որով-

հետև զրպարտիչների կողմը ճարտասան էր և չարիքներում փորձված: Իսկ խանը իր իշխաններով և բոլոր քրիստոնյաները վերահասու եղան, որ այդ թուղթը ինչ-որ հնարանք է, իսկ Մովսեսն անպարտ է, ուստի ամենքը ջանում էին փրկել Մովսեսին, բայց չէին կարողանում: Այս գործի դատը երկարաձգվեց երկու ամիս, բայց ազատարար Աստված նրան փրկեց հետևյալ ձևով. Մելքիսեթը և իր եղբորորդի Սահակ կաթողիկոսը ոխ ունեին Համազասպ եպիսկոպոսի դեմ, որը Հավուց թառի վանքի և Երևան քաղաքի առաջնորդն էր: Սա խրոխտ և ճարտասան մարդ էր, որ ճարտարախոսությամբ վախեցնում էր Մելքիսեթի կողմին և իշխում էր նրանց վրա: Մելքիսեթյանները այս քենի պատճառով վնասը գցեցին Համազասպ եպիսկոպոսի վրա:

Մի օր, երբ դատական ատյանում էին, Սահակ կաթողիկոսը խանի առջև՝ ատյանի մեջ, կանգնեց և ասաց ի լուր ներկաների. «Այդ թուղթը ամբողջովին կեղծ է, որովհետև ո՛չ իմ հորեղբայր Մելքիսեթ կաթողիկոսը գիտի, ո՛չ էլ ես. այլ ես գիտեմ, որ Համազասպ եպիսկոպոսն է այդ նենգությունն արել»:

Այնժամ խանը և այնտեղ գտնված բոլորը ցնծությամբ օրհնեցին Աստծուն, որ անպարտին զրպարտիչների ձեռքից ազատեց: Նույն ատյանում այդ թուղթը պատռեցին, իսկ Մելքիսեթյանները կորագլուխ ու ամոթահար գնացին իրենց տեղերը: Սրանից հետո քիչ ժամանակ անց, մեծ Շահ-Աբաս արքայից Ամիրգունա խանին Մովսես վարդապետի վերաբերյալ հրովարտակ եկավ հասավ, որի մեջ գրված էր. «Ամիրգունա խան, ճանաչիր Մովսես անունով վարդապետին, որ բնակվում է քո քաղաքում՝ քեզ մոտ. շտապ նրան ինձ մոտ ուղարկիր. ես ուր որ լինեմ, թող գա ինձ գտնի»:

Այս որոնման պատճառը սպիտակեցրած մոմն էր, որովհետև այն ժամանակ, երբ Մովսես վարդապետը Երուսաղեմ քաղաքում էր, այնտեղ սովորեց մոմ սպիտակեցնելու արհեստը. և ներկայումս ինքը ամեն տարի [մոմը] սպիտակեցնում և եկեղեցում պատարագին և բոլոր ժամերգություններին

սպիտակ մոմ էր վառում. տերունական և նշանավոր սրբերի տոները կատարում էր մեծ հանդեսով, սպիտակ ու պայծառ մոմերով, մեծ ցնծությամբ, ինչպես որ գրված է սուրբ Հովհան Օձնեցու պատմության մեջ:

Դարձյալ՝ թագավորները սովորություն ունեն, որ տղաներ ու աղջիկներ հավաքեն բոլոր երկրներից: Այս սովորության համաձայն նաև Շահ-Աբաս թագավորը իր նախարարներից մեկին, որի անունն էր Բայինդուր բեկ, սրա հետ նաև այլ ներքինիներ ուղարկեց Ատրպատական երկիրը՝ թագավորի համար հավաքելու տղաներ ու աղջիկներ: Նրանք ելան և եկան հասան Երևան քաղաքը: Մի օր Բայինդուր բեկն ու Ամիրգունա խանը միասին զբոսանքի ելած շրջում էին. զբոսնելով եկան այն անապատը, ուր բնակվում էր Մովսես վարդապետը: Այստեղ Մովսես վարդապետը բերեց և յոթ սպիտակ մոմ նվիրեց Բայինդուր բեկին, յոթն էլ՝ Ամիրգունա խանին: Բայինդուր բեկը, տեսնելով մոմի առավել պայծառ, չքնաղ սպիտակությունը, խիստ սքանչացավ, հաճելիություն զգալով՝ ասաց. «Պահեմ սա և տանեմ, նվեր մատուցեմ շահին»: Երբ Ամիրգունա խանն այս լսեց, ասաց. «Քանի որ այդպես ասացիր, իմն էլ բաժին եմ դնում քոնի հետ, որպեսզի դրա հետ նվեր մատուցվի թագավորին»:

Եվ երբ Մովսես վարդապետը լսեց իշխանների խոսքերը և տեսավ նրանց գործերը, ասաց. «Քանի որ այդպես արեցիք, յոթ մոմ էլ ես եմ բերում, ավելացնում դրանց վրա. այդպես կմատուցես թագավորին»: Իսկ Բայինդուր բեկը գործերը վերջացնելուց հետո գնաց թագավորի մոտ, և զանազան նվերների հետ թագավորին մատուցեց նաև սպիտակ մոմերը, որոնք թագավորը տեսնելով՝ ձեռքն առավ, նայեց, զննեց ու հարցրեց՝ որտեղի՞ց է: Եվ Բայինդուր բեկն ասաց, թե որտեղից է: Արդ՝ դրա համար թագավորը հրովարտակ գրեց Ամիրգունա խանին, որ Մովսես վարդապետին ուղարկի իր մոտ. առանց չնչին հապաղման Ամիրգունա խանը Մովսես վարդապետին ուղարկեց շահի մոտ:

Դրա համար Մովսես վարդապետը Երևանից ելավ, գնաց Բաղդադ քաղաքը, որովհետև այնտեղ էր Շահ-Աբաս թագավորը, որ կամենում էր Բաղդադ քաղաքը ետ գրավել օսմանցիներից, ինչը և գրավեց քիչ օրեր անց: Մինչ տակավին չէր գրավել Բաղդադը, այլ նստած պատերազմում էր նրա շուրջը, այնտեղ Մովսես վարդապետը ներկայացավ թագավորին, երբ մեր թվարկության 1075 [1626] տարին էր: Թագավորը հարցրեց մոմի սպիտակության մասին, իսկ վարդապետը առջևը կանգնած՝ պատշաճորեն պատասխանում էր:

Ապա շահը հրովարտակ գրեց, տվեց Մովսես վարդապետին և ուղարկեց Սպահան՝ Լալաբեկ իշխանի մոտ, որը թագավորի կողմից Սպահանի քաղաքապետ էր նշանակված, որ Մովսես վարդապետին տա հարյուր լիտր (480 կգ.) մոմ, թագավորի ծառաներից երեք ծառա և նրանց բոլոր ծախսերը հոգա: Իսկ Մովսես վարդապետը այգիներից որին հավանի, անպատճառ տան նրան, որպեսզի այնտեղ մոմ սպիտակեցնի, ծառաներին սովորեցնի, տանի թագավորի մոտ, ուր էլ որ նա լինի:

Մովսես վարդապետը առնելով արքունական հրովարտակը՝ եկավ Սպահան, ցույց տվեց Լալաբեկին, իսկ նա կատարեց թագավորի բոլոր հրամանները. Մովսեսին մոմ և երեք ծառաներ տվեց, որոնց անուններն էին՝ Ֆառուխ, Ղարչխա, Բեհզադ, և այն այգին, որը կոչում էին Թիլիմ խանի անունով: Մովսեսն այնտեղ ութ ամիս աշխատեց. մոմը սպիտակեցրեց, ծառաներին սովորեցրեց, ապա վերցրեց սպիտակեցրած մոմերը և ծառաներին հետ, գնաց Ֆահրապատ, քանզի շահը այնտեղ էր, որովհետև Բաղդադ քաղաքը գրավելուց հետո վերադարձել էր Ֆահրապատ՝ այնտեղ ձմեռելու. այս պատճառով Մովսեսը գնաց այնտեղ:

Այդ նույն օրը այնտեղ էր մեծ փառավոր իշխան, Ջուղայեցի խոջա Նազարը, որ խիստ բարեկամ էր Մովսեսին և հարգված Շահ-Աբաս թագավորի: Սրա ձեռքով Մովսես վարդապետը սպիտակ մոմն ու սովորեցրած ծառաներին ներկայացրեց

թագավորին, որը տեսնելով՝ արքան շատ ուրախացավ, ձեռքն առավ և զվարճացավ նրանցով ու բազում հուսադրական խոսքերով անմիջապես ճանապարհեց վարդապետին:

Այդ օրերին եկավ, վրա հասավ մեր Քրիստոս Աստծու ծննդյան Հայտնության տոնը. և ինչպես Մովսեսը սովորություն ուներ՝ մշտապես մեծ հանդեսով էր կատարում տերունական տոները: Եվ ավելի առավել այս տոնը [նախատեսել էր] մեծ պատրաստությամբ ու շատ ավելի պատշաճ կարգավորությամբ, քանզի թագավորն ինքը ևս պատրաստվել էր գալ տոնը տեսնելու և զվարճանելու, ինչը և արեց: Մովսես վարդապետը թափեց երկու մարդաչափ մոմ և ճրագալույցի գիշերը՝ լույս տոնի օրը, վառեց սուրբ Աստվածածնի անունով, իսկ ինքը ոտքի կանգնած մինչև առավոտ հսկում էր ջերմագույն սիրով և հաստատուն հավատով: Հորդաբուխ արտասուքներով աղոթում էր առ Տերը՝ Տիրամայր սուրբ Աստվածածնին բարեխոս բռնելով Տիրոջ մոտ, որպեսզի տոնախմբությունը շնորհալի ցույց տա այլահավատ թագավորին և նրա սիրտը գութով ու խղճով լցնի քրիստոնյա ազգի հանդեպ: Աստծո ողորմությամբ եղավ ըստ վարդապետի խնդրանքի, որովհետև տոնի օրը, մինչ արքան նստած էր զվարճանքին, իսկ վարդապետը զգեստավորված իր պաշտոնյաներով կատարում էր ջրօրհնեքի կարգը, արքան մեծ հաճույք էր ստացել և հավանել տոնախմբությունը: Մովսեսի նկատմամբ համակրանք էր առաջացել, ուստի թագավորը վարդապետի մասին հարցրել էր խոջա Նազարին, սա էլ բարի խոսքեր էր ասել և թագավորի մոտ շատ էր խոսել Մովսեսի մասին:

Օրեր հետո արքան ասաց խոջա Նազարին. «Ձեր վարդապետը ի՞նչ խնդրանք ունի, որ կատարենք, գա՞նձ, կալվա՞ծք կամ ուրիշ որևէ բան, ինչ ինքը կամենում է»: Խոջա Նազարը պատասխանել էր. «Նա այնպիսի մարդ է, որ աշխարհն ու նրա հարստությունը զանց է արել, և դրանցից ոչ մեկի պետքը չունի: Իսկ եթե շնորհ կանես, ապա սրան իբրև պարգև տուր Էջմիածնի լուսարարությունը, որպեսզի այդ

եկեղեցուն սպասավորելով՝ աղոթի թագավորի կյանքի համար»: Նրա [Նազարի] խնդրանքը հաճելի եղավ, և արքան շատ հավանեց, ուստի թագավորական հրովարտակով Սուրբ Էջմիածնի լուսարարությունը տվեց տեր Մովսեսին:

Ապա Մովսես վարդապետը Ցահրապատից դուրս եկավ մեծ փառքով և անպատմելի ցնծությամբ, ոչ միայն իր, այլև բոլոր քրիստոնյաների [ցնծությամբ] եկավ, հասավ Երևան քաղաքը, ապա՝ սուրբ Էջմիածին և առանց հապաղելու ձեռնարկեց սուրբ աթոռի վերանորոգությունը. մեր թվարկության 1076 [1627] տարին՝ Վարդավառի պասի երկուշաբթի օրը սկիզբ դրին շինության ու նորոգության:

Արդ՝ տեսնում ես նորոգությունը, բայց չգիտես, թե ինչպիսին էր ավերակությունը. դրա համար հարկադրված գրում եմ ավերակության մասին, որպեսզի ծանոթանան սուրբ աթոռի թշվառությանը, սրանով նաև այն ցավին ու կսկիծին, որ ունեին ողջ հայ ազգն ու վարդապետները ժամանակին սուրբ աթոռի համար: Սրա հետ նաև [ծանոթանան] Մովսես վարդապետի և իր աշակերտների աշխատանքներին, քրիստոնյաների նվիրատվություններին ու ողորմություններին սուրբ աթոռի նորոգության համար:

Ինչպես ասում է Դավիթ մարգարեն՝ ***«Երուսաղեմը դարձրին ինչպես մրգապահ հյուղ»*** *(Սաղմ. ՀԸ 1): Իսկ Եսայի մարգարեն Սիոնի մասին ասում է.* ***«Ինչպես հյուղակը՝ սեխի պարտեզում»*** *(Ես. Ա 8): Սրա նման համարիր նաև Աստվածաբնակ սուրբ աթոռը, որովհետև բոլորովին դատարկվել էր ունեցվածքից, կողոպտվել էր զարդերից. ո՛չ գիրք կար, քանի որ այնտեղ ժամասացություն չկար, ո՛չ էլ ընթերցում, ոչ զգեստ ու շուրջառ, որովհետև ժամակարգություն ու պատարագ չկային: Մինչև անգամ Քրիստոսի իջման տեղն ու սուրբ սեղանը ծածկոց չունեին: Ո՛չ կանթեղներ, որովհետև լույս չկար, այլ մշտապես խավարի մեջ էր, բայց մի այլազգի մահմեդական ձեթի ճրագ էր վառում և դնում բեմի վրա, այն էլ երբեմն-երբեմն անցորդ-ճամփորդների համար, որպեսզի*

տեսնելով այն՝ իրեն ողորմություն տան: Ո՛չ խնկարկություն, որովհետև բուրվառ ու խունկ չկար: Եկեղեցու սալարկած հատակը քանդքնդված էր, դարձել էր գեռունների ու սողունների բույն, իսկ ունեցած մեծամեծ լուսամուտները բաց էին՝ առանց շրջանակի, որտեղից թռչունները ներս էին մտնում, եկեղեցին լցնում ծիրտերով ու ծեղերով և այլ աղբով, որոնք ամեն օր հարկադրված սրբում էին: Իսկ առավոտյան լուսանալիս թռչունների ձայնը խլացնում էր ժամասացությունը:

Իսկ դրսից գմբեթի գագաթը, ամբողջ տանիքը, պատերի երեսները քանդված էին ու քարերը թափված, պատերի հիմքի քարերը փշրված ու ծակոտված: Վաղեմի ժամանակներից եկեղեցու շուրջը եղած շինությունները դարձյալ ավերված էին և միմյանց վրա փլված: Հողն ու մոխիրը այնքան էին բարձրացել, որ եկեղեցու շուրջը ամեն կողմից աղբն ու հողը յոթ կանգուն բարձրացել, եկել ծածկել էր եկեղեցու հիմքերն ու աստիճանները, որ դրսի կողմից էին:

Իսկ եկեղեցու կամ տան զարդերը, սպասքներ ու անոթներ բնավ չկային, որովհետև ինչ որ եղել էին հին ժամանակներից, կաթողիկոսները բոլորը վաճառելով կամ գրավ դնելով վատնել էին, և այժմ նույնպես գրավ դրած անոթներ կային մահմեդական իշխանների մոտ: Սրանք Մովսես վարդապետը ազատեց. դրանք էին սուրբ Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակես Հայրապետի աջը, որոնց հետ նաև սկիհ, բուրվառ, շուրջառ և այլ իրեր:

Իմ ասած խոսքերը ցույց են տալիս, որ տեղը թափուր էր մարդկանցից: Ճիշտն ասեմ, ամենևին անբնակ չէր, իսկ դու համարիր իբրև անբնակ, որովհետև կաթողիկոսները այնտեղ՝ Էջմիածնում չէին բնակվում, այլ Երևան քաղաքում՝ Կաթողիկէ եկեղեցում, կամ երկրներում շրջագայում էին: Իսկ ոմն սևագլուխներ՝ սինլքորներ, գռեհիկներ, ինչպես գյուղացի հողագործներ, ստորին մշակների հետ բնակվում էին Էջմիածնում և տարվա շատ օրեր գյուղերում էին անցկացնում, քան Էջմիածնում:

Երբ Մովսես վարդապետը սկսեց նորոգումը, հողի ու մոխրի համար տարակուսում էին, որ բլրացել էր շուրջանակի, թե ինչպես կլինի պեղել: Բայց որովհետև Աստծո կամքը քաղցրացել էր և գործի ձեռնարկությունը նրա հաճությամբ էր, դյուրին եղավ հողի վերացումը: Որովհետև գետից վարար ու հորդ ջուրը բերեցին, հողի մի կողմը կապեցին և բազմաթիվ մշակներ գործի դրին. մշակները սկսեցին հողը փորել և խառնել ջրին. այդպես անելով՝ ջուրը հողն առած տանում էր, իսկ քարը մնում էր: Քիչ օրեր հետո շուտափույթ ամեն կողմից հողը վերացավ և ամբողջ տեղը բացվեց, դարձավ հարթահատակ գետին: Մնացած քարերը շարեցին տների պատերում, որ գործին օգտակար եղավ: Ապա շուրջանակի լայն ու ընդարձակ պարիսպ քաշեցին՝ նրա վրա ութ բուրգ կառուցելով:

Իսկ շինված պարիսպը այսպես ձևեցին: Ինչպես որ եկեղեցու մեջ տեսնվում են եկեղեցու չորս խորաններ, որոնք հորինված են նրա մեջ աշխարհի չորս կողմերը ուղղված. եկեղեցու արտաքին կողմից այս չորս խորանների ճակատներից [սկսելով]: Նախ չափեցին արևելյան ճակատից դեպի արևմուտքի քառասուներեք գազ, որ անում է վաթսունհինգ հալաբի, ապա քաշեցին արևելյան կողմի պարիսպը. այսպես իմացիր նաև արևմտյան կողմինը: Սույնպես և հյուսիսային կողմի խորանի ճակատից չափեցին դեպի հյուսիս քառասուն գազ, որ անում է հիսունվեց հալաբի, ապա պարիսպը քաշեցին. այսպես իմացիր նաև հարավային կողմինը: Ապա արևմտյան կողմում պարսպի մեջ շինեցին դարպաս, տներ իրենց և հյուրերի պետքերի համար: Հյուսիսային և արևելյան կողմերում շինեցին միաբանների բնակության խցեր, իսկ հարավային կողմում շինեցին սեղանատուն, փուռ, մնտեսատուն, ցորենի և այլ նյութերի ամբար: Այս բոլոր շինվածքներից միայն պարիսպն է հողից շինված, իսկ մնացած բոլորը շինվեցին տաշած քարով, թրծված աղյուսով, կրով ու գաջով, գեղեցիկ ու վայելուչ հորինվածքով:

Սրանից հետո եկեղեցու գմբեթի տանիքը նորոգեցին, քանզի սալերը քանդվել և տեղերից հեռու էին թռել: Իսկ եթե մեկը ցանկանում է իմանալ սուրբ Էջմիածնի լուսակառույց, Քրիստոսանկար, Աստվածաբնակ տաճարի չափը, այսքան է. հիսուն հալաբի չափ երկայնքն է արևելքից դեպի արևմուտք, քառասունութ հալաբի լայնքն է հյուսիսից դեպի հարավ. երեսունհինգ հալաբի բարձրությունն է՝ ներսի կողմի գմբեթի պատից մինչև գետին: Այդ չափերը եկեղեցու մեջ ներսի կողմինն են առանց պատերի:

Եվ օրավուր նորոգում, հաստատում էր սուրբ աթոռը, որով [հաստատում էր] քրիստոնեության հավատի ամեն կարգ ու կանոն:

Որովհետև սուրբ աթոռի նորոգման լուրը հռչակվելով ծավալվեց ողջ աշխարհում՝ Հունաստանում, Պարսկաստանում, Քրդստանում, Վրաստանում, ուստի ամենքն էլ ուրախանալով ցնծում էին:

Մովսես վարդապետը նաև իր աշակերտներից ուղարկեց ամեն կողմ քարոզության, որոնք գնացին հոգեբուխ քարոզությամբ և բարեկրոն վարքով հաստատեցին քրիստոնեական հավատի և եկեղեցական ավանդության կարգերն ու կրոնը, որովհետև ուր էլ գնում էին, իրենց վարդապետի նմանությամբ ճշմարիտ գործեր էին ցույց տալիս: Շինում էին եկեղեցիներ, կարգում էին քահանաներ և պարտելով կործանում էին ճշմարտության հակառակորդներին, որի հետևանքով զորանում, առաջանում էր ճշմարտությունը: Այլև այս Հոգելից սուրբ վարդապետ տեր Մովսեսը հաստատեց դպրոց Օհանավանքի մեծափառ սուրբ ուխտում, որտեղ հավաքեց բազմաթիվ մանուկներ և բոլորի ծախսն ու պետքերը ինքն էր հոգում, իսկ մանուկները անզբաղմունք ու անխափան սովորում էին եկեղեցական ուսումը, աստվածաշնչական գրքերի իմաստասիրությունը: Սրանք բոլորը եղան երկրին պիտանի մարդիկ և օգտակար՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, աբեղաներ, քահանաներ, և բոլոր վանքերը, որ ամայացել ու խավարի մեջ

էին, լցվեցին միաբաններով, աբեղաներով, կրոնավորներով, իսկ գյուղերը՝ հմուտ քահանաներով: Այս պատճառով ողջ ժողովուրդը, առաջին կաթողիկոսի անկարգությունից ձանձրացած, իսկ Մովսեսի բարեկարգությունից մխիթարված՝ սիրով ու հոժարությամբ, կամենում էին, որ մեր սուրբ հայր Մովսես վարդապետը լինի կաթողիկոս: Ամեն տեղերից գրություններով ու աղաչանքներով թախանձում էին վարդապետներ, եպիսկոպոսներ և նշանավոր մարդիկ, որ հանձն առնի կաթողիկոսության աստիճան, բայց նա հրաժարվում էր՝ իրեն անարժան համարելով առաքելական աստիճանին:

Բայց Աստծո մարդ այս տեր Մովսես վարդապետը մշտապես իր հոգում վարանում, տխրում ու ցավում էր հարյուր թուման տուգանքի համար, անտանելի ծանր բեռ ու անխզելի շղթա եղավ էջմիածնի սուրբ աթոռի վրա. ոչ միայն նա, այլև ողջ հայոց ազգը [տխրում ու ցավում էր]: Քրիստոսաբնակ սուրբ աթոռի փրկության համար Մովսես վարդապետը չծուլացավ՝ իրեն կամ իր տկար ծերությունը խնայելով, այլ ելավ, գնաց արքայի արքունիքը՝ Ղազբին քաղաքը, քանզի այնտեղ էր Շահ-Աբաս թագավորը մեր թվարկության 1077 [1628] տարում: Եվ դիմելով այստեղ-այնտեղ՝ թագավորների նախարարների մոտ, աղաչում էր նրանց իմացնել արքային հարյուր թուման հարկը վերացնելու էջմիածնի վրայից: Նախարարները հարմար չհամարեցին, ասելով. «Այս թագավորը շատ փողասեր է և ագահ. փողի այդքան շահից չի հրաժարվի, մանավանդ որ այդ գործը ինքն է հաստատել, որով ավելի երևում է, որ չի հրաժարվի դրանից: Այդ պատճառով դու պարտավոր ես լռել այս ժամին և օրերին: Իսկ մենք հարմար ժամանակ գտնելով՝ կխոսենք արքայի առջև»: Այս պատճառով թախծալից սրտով վերադարձավ Ղազբինից, եկավ սուրբ էջմիածին:

Իսկ Շահ-Աբաս արքան ելավ Ղազբինից, գնաց Ֆահրապատ քաղաքը, (որ կոչվում էր Աշրավ) ձմեռելու: Եվ մարդկային հյուծվող բնույթին համապատասխան հիվանդացավ,

մեռավ մեր թվարկության 1078 [1629] տարվա հունվար ամսի 7-ին և կտակով հաստատեց, որ թագավորությունը տրվի իր թոռին: Քանզի արատամիտ ու բազմախորհուրդ Շահ-Աբաս թագավորը իր որդիներից ոմանց սպանեց, ոմանց կուրացրեց՝ երկյուղելով, թե մի գուցե [նրանցից մեկնումեկին] իշխանները թագավոր կարգեն: Մնացել էր մի թոռ՝ իր ավագ որդու որդին, այս պատճառով թագավորությունը տվեց իր թոռանը: Բոլոր նախարարները, թագավորի տան հավատարիմները հավաքվեցին, թոռին թագավորեցրին և նոր թագավորին կոչեցին Շահսեֆի, քանի որ վիճակով դրին նրա անունը. վիճակն ու կոչումը անվանը հարմարվեց, որովհետև նորընծա թագավորի հոր անունը Սեֆի էր: Նորընծա թագավոր Շահսեֆին թագավոր նստեց նույն թվականին՝ 1629 տարվա հունվար ամսի 19-ին:

Այս ժամանակ պատշաճ ու հարմար պահ եղավ հարյուր թուման տուգանքը վերացնելու համար: Այդ պատճառով Սպահան քաղաքում բնակված ջուղայեցի ժողովուրդը, մանավանդ Աստծո ողորմությունների արժանի քրիստոսասեր մեծ իշխան խոջա Նազարը, նամակ գրեցին և արագընթաց սուրհանդակի միջոցով հասցրին էջմիածին՝ Մովսես վարդապետին, որ շուտափույթ հասնի նորընծա թագավորի պալատը՝ հարյուր թումանը վերացնելու նպատակով: Մովսես վարդապետը անհապաղ շտապանքով գնաց Սպահան քաղաքը՝ թագավորի պալատը, և թագավորի պալատում ութ ամիս մնալով, տեսնելով բոլոր նախարարներին՝ հներին ու նորերին, և նրանց սրտերը գրավեց բազմանվեր աղերսանքով:

Ապա Աստծո սուրբ մարդը պատրաստեց ընծա՝ որպես վայել է թագավորներին, սկուտեղով զուտ ոսկի դահեկան և այլ թանկագին իրեր, խնդրագիր, որ կոչվում է արզա: Վարդապետն ու խոջա Նազարը նախարարների միջնորդությամբ ներկայացրին թագավորին: Վարդապետի վերաբերյալ արքայի հարցումին խոջա Նազարը նրան տեղեկացրեց՝ պատմելով վարդապետի ազնվության մասին, նաև թե նախածանոթ և

հաճելի ծառա էր նախորդ մեծ թագավորին՝ քո պապին, և այժմ աղոթում է թագավորի կյանքի համար, բայց այս խնդրանքը ունի, որպեսզի արքան քննելով գթա իր տառապյալ ժողովրդի վրա և ծանր բեռը, որ անտեղի և զուր դրվել էր մեզ վրա, այսինքն՝ արքան հրամայի հարյուր թուման տուգանքը վերացնել:

Եվ արքա Շահսեֆին այնտեղ՝ ատյանում, շատ բան խոսեց խոջա Նազարի հետ, Մովսես վարդապետից հարցրեց հարյուր թուման տուգանքի մասին և աստվածային ողորմությամբ ու շնորհներով վարդապետի բոլոր խոսքերը դյուրին ու ախորժելի թվացին թագավորին, քանզի ամենաթագավոր Աստված, որ իր ձեռքում պահում է թագավորների սրտերը, թագավորի կամքը հաճելի դարձրեց ու քաղցրացրեց, ուստի ի լուր ամբողջ ատյանի, ասաց. «Զիջեցի հարյուր թուման տուգանքը, որ պիտի տայիք թագավորի դիվանին, այսուհետև կացեք ազատ և աղոթեցեք մեր կյանքի ու հաջողության համար»: Այն ժամանակ խոջա Նազարն ու Մովսես վարդապետը և բոլոր իշխանները, որ կանգնած էին թագավորի առջև, ձեռքերը բարձրացրին, գոհության ձայնով օրհնեցին Աստծուն ու թագավորին: Եվ ուրախությամբ ատյանից արձակվեցին, գնացին իրենց տեղերը: Այնուհետև Մովսես վարդապետը և խոջա Նազարը ամեն օր շրջելով իշխանների պալատները և դիվանական մատյանների վերակացուների ու գրագիրների մոտ՝ այնքան չարչարվեցին, մինչև որ բոլոր մատյաններից, որտեղ որ գրված էր այդ բանը, ամեն տեղից հանեցին, դուրս գրեցին:

Ապա խոջա Նազարը գրեց մի այլ խնդրագիր և մատուցեց թագավորին՝ խնդրելով, որ տա թագավորական կնիքով հրովարտակ հարյուր թուման տուգանքը վերացնելու մասին, միաժամանակ արքայից խնդրեց՝ Մովսես վարդապետին տալ կաթողիկոսության իշխանությունը: Արքա Շահսեֆին կատարեց նրանց բոլոր խնդրանքները՝ թագավորական կնիքով, ազդու և հատու խոսքով հրովարտակ տվեց, թե՝ «Թող վերացվի հարյուր թուման տուգանքը, որը մեր թագավորներից

դրված էր ձեր Էջմիածնի աթոռի վրա, տրվի հրաման Մովսես վարդապետի կաթողիկոսության՝ ըստ ամենայն հայոց ազգի խնդրանքի»: Արդ՝ այսպես մեծ չարչարանքով և շատ դրամ ծախսելով, մոտ հազար թուման, հազիվ կարողացավ վերացնել հարկի ծանր բեռը սուրբ աթոռից:

Սուրբ վարդապետ Մովսեսը թագավորական հրովարտակը առավ, վերադարձավ մեծ ուրախությամբ, եկավ հասավ Աստվածաբնակ սուրբ աթոռ Էջմիածին: Սուրբ աթոռի ազատության լուրը տարածվեց ընդհանուր աշխարհի հայ ազգի մեջ. ամենքը լցվեցին անպատմելի ուրախությամբ և ցնծությամբ ու գոհացան Աստծուց:

Այնուհետև ամբողջ աշխարհի երևելի մարդիկ՝ եկեղեցականներ, աշխարհականներ [խոսքը հայերի մասին է], սկսեցին առավելապես աղերսագիր ուղարկել Մովսես վարդապետին. խնդրում, աղաչում էին, որպեսզի նա մի այլ պատճառ հնարի հավատի հաստատության և եկեղեցու կարգի համար, հանձն առնի կաթողիկոսությունը: Այս խնդրագրերը ուղարկվեցին Պարսկաստանից, Վրաստանից, Քուրդիստանից, Հոռոմստանից, իսկ մեր սուրբ հայրը ոչ թե անձնական փառքի, որ փառավորված էր Աստծուց և մարդկանցից, այլ Աստծո ժողովրդի օգտի և հոգևոր կրոնի հաստատության համար լսող եղավ ամենքի աղաչանքներին, ընդունեց կաթողիկոսական աստիճան և Աստծո ամենասուրբ Հոգու օծմամբ օծվեց ամենայն հայոց ազգի հայրապետ՝ պայծառ և պանծալի ժառանգորդ սուրբ Էջմիածնի բարձրագահ աթոռի մեր թվարկության 1078 [1629] տարվա հունվար ամսի 13-ին՝ Տիրոջ տնօրինության [մարդեղության] օրը: Եվ Տիրոջ խոսքի համաձայն լուսավորող ճրագ դրվեց բարձր աշտարակի մեջ գերագահ աթոռում՝ լինելու լուսատու մեր Արամյան տան. և իր աստվածաշնորհ վարդապետությամբ մխիթարում էր բոլորին քաղցր քարոզչությամբ՝ ուղղելով դեպի արդարության ճանապարհը:

Եվ մեր սուրբ հայրը մաքրակենցաղ էր ու սրբասուն, երկայնամիտ էր ու ողորմած: Սրա ձեռքով շատ գերիներ ազատ-

վեցին գերիչներից, որովհետև սրա ժամանակ անհաշտ խռովություն կար պարսիկների ու օսմանցիների միջև, ուստի ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից: Գերիներից ում էլ տեսնում էր, անպատճառ գնում և ազատում էր:

Սա մնաց Բարձրագահ աթոռի վրա՝ սուրբ Էջմիածնում ուղիղ վարդապետությամբ, նորոգեց ավերակները, պայծառացրեց միաբաններով ու վարդապետներով, պատշաճ ու հաստատուն ժամանակագրությամբ. հարստացրեց եկեղեցական անոթներով, նյութական հարստությամբ: Սա կաթողիկոս մնաց երեք ու կես տարի և 1081 [1632] թվի մայիս ամսի 14-ին վախճանվեց. այս կյանքից մահով պակասեց և հանգստով ավելացավ Տիրոջը, գնաց իր անձկալի Քրիստոսի մոտ, որ հանապազ, մշտապաղատ և սրբանվեր աղոթքներով կրում էր իր հոգում:

Այնպես պատահեց, որ սրա մահը տեղի ունեցավ Երևան քաղաքում՝ սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի վանքում, այս պատճառով տարան ընդհանուր գերեզմանատուն՝ Կոզեռն կոչված բլուրը, որ Կոզեռն վարդապետի այնտեղ գտնվող գերեզմանի համար այդպես են կոչում բլուրը: Կոզեռն և Մելքիսեթ վարդապետների գերեզմանին կից, այս երկուսի մեջտեղում պատրաստեցին այս սրբի հանգստյան շիրիմը. այնտեղ երկու փակված տապանների միջև դրին նրա սրբասուն մարմնի նշխարները մեծ պատվով ու փառքով՝ ի փառս Քրիստոսի և բարեփոխություն քրիստոնյաների:

Եվ ինչպես սրա կենդանությամբ ամեն ոք ուրախանալով ցնծում էր, այդպես էլ սրա մահով ամեն ոք սգով տոգորված տխրեց, ոչ միայն քրիստոնյաները [հայերը], այլև մահմեդականները, նաև ինքը քաղաքապետ Մահմադղուլի խանը՝ Ամիրգունա խանի որդին, և իր բոլոր իշխանները, որոնք եկան Մովսես կաթողիկոսի թաղմանը և սգակից լինելով քրիստոնյաներին, ողբում էին նրա մահը, որովհետև այնպիսի աստվածահաճո և աշխարհաշեն մարդ պակասեց երկրից, որի հիշատակը թող օրհնությամբ լինի և նրա աղոթքներով Տերը մեզ ողորմի. ամեն (Ա. Դավրիժեցի):

ՓԻԼԻՊՈՍ ԱՂԲԱԿԵՑԻ

Մովսես Տաթևացու բարեգործությունները իր կյանքից հետո էլ շարունակվեցին իր իսկ աշակերտների կողմից: Եվ ինչպես ասվում է՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում, այդպես էլ նրա աշակերտներն էին: Որոնցից ամենաակնառուն էր Փիլիպոս Աղբակեցին, որը և ժառանգեց իր ուսուցչի առաքինությունները, հետո նաև Մովսես Տաթևացու առաջարկով՝ հայրապետական աթոռը: Փաստորեն նա՝ Փիլիպոսը, կաթողիկոս դառնալու պատվերը ստացավ սուրբ Անանիայի անապատում: Սակայն նրան միանգամից չօծեցին, այլ հարկ համարեցին նաև ազգային ընտրության պայմաններն էլ լրացնել: Քանզի բազում շեղումները, որոնք կային այդ շրջանում, Մովսես հայրապետը շտկեց և վերացրեց ինքնակամ նորամուծությունները, ինչպես որ «աթոռակից կաթողիկոսների» գոյությունը. նա չցանկացավ նաև, որ Փիլիպոսն էլ իր հրամանով միանշանակ դառնար կաթողիկոս, այլ իր առաջարկը դրեց համաժողովրդական ընտրության առջև, ինչպես որ կարգն է. «Եվ մենք իրավունք ունենք այդ կետն էլ նորից Մովսեսի արդյունքը համարել և նրա որոշ հրահանգի հետևանք դիտել, քանզի, անշուշտ, անմիջական օծման կանցնեին միաբանները և մեծամեծերը, եթե բացարձակ լիներ Մովսեսի կամքը: Քանզի անչափ մեծ էր պաշտելիությունը նրա անձի շուրջ» («Ազգապատում»):

Փիլիպոսը իր սրբակենցաղ վարքի շնորհիվ արժանացավ հրաշագործության շնորհի և կոչվեց Փիլիպոս Սքանչելագործ: Մշտապես շրջելով և գործելով իր սիրելի ուսուցչի՝ Մովսես Տաթևացու հետ, նա էլ ինքնըստինքյան երկար ժա-

մանակ կենցաղավարել է սուրբ Անանիայի անապատում. «Եթե Մովսեսի կաթողիկոսական շրջանի մեջ շատ հիշատակություններ չկան Փիլիպոսի գործունեության մասին, պատճառն այն է, որ նա անմիջապես կապված էր Մովսեսի անձին՝ իբրև նրա անբաժան գործակից, և առիթ չի ունեցել զատաբար հատուկ գործեր կատարել:

...Այդ սրտակից գործակցության հետևանքն էր նաև այն, որ Փիլիպոսը Մովսեսին հաջորդելով՝ նոր բան չձեռնարկեց, այլ ըստ ամենայնի, ջանաց լրացնել Մովսեսի սկսած և արագահաս մահվան հետևանքով չլրացրած ձեռնարկելիքները: («Ազգապատում»):

Նա էլ իր ուսուցչի պես մեծ սեր էր տածում սուրբ Անանիայի անապատի հանդեպ և ամեն ջանք թափում էր նրա պայծառության համար, և իր ընդհանուր շինարարական գործունեության շրջանում անդրադարձավ նաև սույն անապատի վերանորոգմանը. «Երևանի Անանիայի վանքն էլ փայտակերտ էր, մատուռից բացի: Փիլիպոսին հարկ եղավ նորից նորոգություն ձեռնարկել. իր կատարած շինության մեջ հատկապես հիշվում է ...Սուրբ Անանիայի վանքի ժամատան սեղանատունը, խուցերը և այլ մասնավոր շինությունները և ոչ թե փայտով, այլ քարով ու կրով» («Ազգապատում»):

Ինչպես Մովսես հայրապետի, այնպես էլ նրա աշակերտի և հաջորդի մասին ասվել են գովաբանական խոսքեր. «Զբաղեցնելով սուրբ աթոռը՝ Փիլիպոսը փայլեց ինչպես արև հատկապես հայ ժողովրդի համար» (Սիմեոն Երևանցի «Ջամբռ»):

Նա որպես բարի հովիվ գիշեր ու զօր հոգում էր իրեն վստահված հոտի կարիքները. «Սա իր կաթողիկոսության սկզբից շրջում, այցելում էր մերձակա վանքերը և հորդորում էր նրանց, որ զգաստությամբ և սրբությամբ կենցաղավարեն, և եթե որևէ տեղ գտնում էր որոշ ցոփակյացների, ջանում էր ուղղել նրանց խրատով և սաստով: Իսկ ովքեր չէին ուղղվում, դուրս էր հանում, որպեսզի մի փոքր խմորը բոլորը չապականի: Նա նաև զարդարեց Անանիա առաքյալի վանքը, որ

Երևանում է, որին կոչում են նաև «Երևանի անապատ», որտեղ կային 30 կրոնավորներ՝ ընտիր և խստակյաց վարքով: Եվ կաթողիկոսն ինքը բազում անգամ ժամանակ առ ժամանակ գնում էր այնտեղ և մնում մի քանի օր» (Հայր Միքայել Զամչյանց, «Հայոց Պատմություն»):

Նրա ժամանակակից Առաքել Դավրիժեցու պատմությունից առավել մանրամասն կարող ենք ծանոթանալ Փիլիպոս Սքանչելագործ կաթողիկոսի մասին, որից և մեջ ենք բերում որոշ հատվածներ:

«Տեր Փիլիպոս կաթողիկոսը Բարմ երկրից էր, որ այժմ կոչվում է Աղբակ, այն գյուղից, որի անունն է Էրնկան: Սա լինելով մանուկ՝ տասնչորս տարեկան, ավել կամ պակաս, լսեց Մեծ անապատի մենակյացների ճգնական վարքի մասին: Մեծատենչ փափագով ելավ, գնաց Մեծ անապատը՝ կրոնավոր դառնալու և հետևելու առաքինական վարքի մաքրակենցաղ սրբությանը, որը խիստ փափագում էր: Իսկ անապատի կրոնավորները նրան անապատ չթողեցին մանուկ հասակի և անմորուք լինելու պատճառով: Սակայն նա աշխարհ չդարձավ, այնտեղ՝ անապատից դուրս, անտառների մեջ մնաց, որ անապատի շրջապատում էին, և այդպես համբերեց ութ ամիս:

Այս ժամանակները Մովսես կաթողիկոսը, տակավին վարդապետ լինելով, քարոզությամբ շրջում էր երկրում և լուսավորում բոլոր մարդկանց՝ ինչպես արեգակ: Իսկ պարոն Սարգիսը՝ Մեծ անապատի հայրը, Փիլիպոսին տվեց Մովսես վարդապետին՝ աշակերտության: Սրա մոտ մնալով Փիլիպոսը հասավ արբունքի՝ երիտասարդական հասակի: Նրան օրհնեցին աբեղա՝ կուսակրոն քահանա, իսկ նա գիշեր-ցերեկ հետևում էր ճգնական վարքի, առաքինի գործերի և Աստվածաշնչական գրքերի ընթերցման: Մովսես վարդապետը տեսնելով սրա առաջադիմությունը՝ իր համաձայնությամբ ու բոլոր միաբանների վկայությամբ նրան վարդապետական իշխանություն, քիչ տարիներ անց՝ վարդապետական գավազան տվեց. 1630 թվականին նրան օրհնեց եպիսկոպոս:

*1632 թվականին, երբ մոտ էր Մովսես կաթողիկոսի մահը, նրա մոտ հավաքվեցին եպիսկոպոսներ, վարդապետներ և երևելի մարդիկ, նաև Թահմազդուլի խանը՝ քաղաքի իշխանը, և ողբալով ասացին. «Որովհետև քո Տերը և կյանք տվողը այդպես կամեցավ, որ դու հեռանաս ու գնաս մեզանից, ուստի այժմ խնդրում ենք քո հայրախնամ գութից, որպեսզի մեզ բոլորովին որբ չթողնես, այլ հայտնես մեզ, թե ում ես տալիս մեզ, որ քեզանից հետո լինի հայր և հովիվ»: Նա ասաց. «Դուք գիտեք, ում կամենում եք, ընտրեք»: Իսկ ժողովրդի բազմությունը ասաց. «Մենք ամբողջ աշխարհով քեզ ընտրեցինք, իսկ այժմ դու ում ընտրես՝ մեզ ընդունելի է»: Նա ասաց. «Ես կամենում եմ, որ Փիլիպոս վարդապետը լինի իմ փոխանորդը և սուրբ էջմիածնի աթոռի հաջորդը»: Երբ նրանք բոլորը լսեցին, հոժար կամքով հաճեցին և ընդունեցին, որ Փիլիպոսը լինի կաթողիկոս: Երբ Մովսեսի մահվան լուրը տարածվեց ողջ աշխարհում՝ արևելքում, արևմուտքում, նաև այն խոսքը, թե Փիլիպոսի համար պատվիրել է կաթողիկոս անել, բոլորը հոժարությամբ և կամովին հավանություն տվին. այս պատճառով ամեն տեղից ուղարկեցին վկայական թղթեր, որպեսզի Փիլիպոս վարդապետը լինի կաթողիկոս: Մինչև վկայական թղթերի գալը այդ տարին անցավ, վրա հասավ 1633 թվականին, նրան հունվարի 13-ին՝ Տիրոջ տնօրինության տոնին, Սուրբ Հոգու օծմամբ օրհնեցին նրան կաթողիկոս: Եվ մեր հայոց ազգը, չնայած Մովսեսի մահվան առիթով վշտալից եղած տխրեց, սակայն Փիլիպոսի հաջորդությամբ ուրախանալով՝ ցնծաց, որովհետև հոր փոխարեն որդին մնաց հանուր ազգի իշխանը՝ ըստ մարգարեի Դավթի վկայության. «**Եվ թեպետ Մովսեսը վախճանվեց, նրան հաջորդեց Հեսուն, և թեպետ վերացավ Եղիան, նրա փոխարեն Եղիսեն մնաց միևնույն ոգով**»:*

Նա բազմաչխատ չարչարանքով վերակառուցեց նաև սուրբ էջմիածինը՝ բոլոր շենքերը նորից շինելով, և Սպահանից էջմիածին վերադարձրեց սբ. Գրիգոր Լուսավորչի աջը.

«Սուրբ հայրապետ Փիլիպոսի կաթողիկոսությունը օրավուր զորանում ու հաստատվում էր, որովհետև Տերը նրա հետ էր, քանզի վարքով խիստ ճգնող, պաս պահող, մտքով սրբախորհուրդ, աղոթքներում անձանձիր, խոսակցությունը աստվածային էր. ինչ որ Աստծուց խնդրում էր, Աստված ամենը անթերի պարգևում էր: Մեր աչքերով հենց տեսանք, որ բազում դիվահարներ նրա աղոթքներով ազատվեցին, հիվանդներ, պես-պես ցավագարներ, անդամալույծներ առողջացան, ամուլ կանայք նրա աղոթքներով զավակներ ծնեցին...

Նա նաև խոր մտածող, խելոք, աշխարհաշեն և արդյունաբար մարդ էր. աստվածաշնչական գրքերի մեջ սրամիտ, նրբաքնին, խրատների ու քարոզների մեջ քաղցրախոս, արդյունավոր: Եվ սրանք աղոթքների շնորհիվ աստիճանաբար ստացավ, որովհետև ամեն տեղ, ուր էլ քարոզում էր ու կանոնադրում, ամենը պտղաբերում և արդյունավետ էին դառնում:

Նաև շատ տոնասեր էր, տոները պայծառացնող, եկեղեցիները զարդարող, տերունական և սուրբ Աստծո տոների պատվիչ, ինչպես որ գրված է Հովհան Օձնեցու մասին: Այս պատճառով նրա անունը չափազանց հռչակվեց և համբավը տարածվեց ողջ աշխարում՝ ոչ միայն հայերի մեջ, այլև մահմեդականների, վրացիների, և ամենքը սիրում, հարգում էին նրան: Առավել ճգնության, սրբության և Աստծուն հաճելի ծառա լինելու համար խիստ վախենում էին նրանից ոչ միայն ռամիկները, այլև աշխարհակալները, իշխանները, զորավարները, քանզի նրա թշնամիներից շատերին տեսան, որոնք կործանվեցին, մեջտեղից վերացան, և նրա սիրելիներից, որոնք զորանալով առաջադիմեցին:

Եվ այն դպրոցը, որ Հովհանավանքում հաստատեցին, սա ևս ամուր հաստատեց և ուսումով ու առաքինությամբ վարժեցնելով՝ հասցրեց կատարելության և տարիներ հետո Հովհանավանքից տեղափոխեց, բերեց սուրբ էջմիածին և դպրոցը այնտեղ հաստատեց, որտեղ բոլորը սովորեցին և եղան

պիտանի մարդիկ՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, քահանաներ: Եվ վաղուց ի վեր խափանված վանքերը լցվեցին աբեղաներով, իսկ գյուղերն ու քաղաքները՝ քահանաներով, և դեռևս օրավուր աճում է նույն դրվածքով: Եվ սրանով բազմաթիվ կիսավեր ու խախտված եկեղեցիներ նորոգվեցին, և գյուղերում ու քաղաքներում Աստծո նոր տներ շինվեցին հրաշալի հորինվածքով, պայծառ ու փառավոր ամեն որպիսությամբ»:

Նա հովվապետական այցով եղավ Կոստանդնուպոլսում և Երուսաղեմում, մեծ ընդունելության արժանացավ և մեծ օգտակարություն բերեց իր հոտին թե՛ հոգևոր և թե՛ նյութական. «Իր վախճանի մոտիկ օրերին տեր Փիլիպոս կաթողիկոսը սուրբ Էջմիածնում էր: Աղուհացքի օրերում՝ չորրորդ կիրակի օրը, ըստ իր մշտական սովորության, նստեց աթոռին և սկսեց այդ կիրակվա քարոզն ասել, որի բնաբանն էր. **«Մի հարուստ մարդ, որը ուներ մի տնտես, սրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե նրա ունեցվածքը վատնում է»** (Ղուկ. ԺԶ 1): Մեկնաբանելով հասավ այն խոսքին, որ ասում է. **«Չես կարողանա այլևս տնտես լինել»** (Ղուկ. ԺԶ 2): Այստեղ խոսքը վերջացրեց: Իսկ երկրորդ օրը, որ երկուշաբթի էր, տկարացավ և ընկավ մահիճ: Նրա մոտ հավաքվեցին բոլոր միաբաններն ու նրա աշակերտները: Հարցնում էին տկարության մասին: Նրանց պատասխանելով՝ ասաց. «Այս է իմ վերջին տկարությունը, այլևս չեմ առողջանա, քանզի մինչ քարոզս էի ասում. երբ հասա այն խոսքին, որ ասաց՝ չես կարող այլևս տնտես լինել, ինձ թվաց, որ ինչ-որ մեկից հայտնվեց իմ սրտում, թե այլևս մարմնավոր կյանքով չես ապրի, այլևս չես տնտեսի Աստծո տանը, այլ մահվամբ ես վճարվում, ինչպես որ խոսքը վկայելով ասաց՝ չես կարող այլևս տնտես լինել»: Նրա այս խոսքերը լսելով՝ բոլորը մորմոքում ու մղկտում էին նրա ասածի վրա, բայց նա, ըստ իր աստվածատուր շնորհների, բոլորին մխիթարում էր: Այդպես տկար մնաց, մինչև հասավ հինգերորդ կիրակին և այդ գիշեր

առավոտվա դեմ սկսվեց հոգեվարքը: Ինքը իմացավ, որ հոգեվարքի մեջ է, ուստի միշտ աղոթք ու օրհնաբանություն ուներ բերանում Աստծու հանդեպ՝ ասելով. «Այժմ արձակիր քո ծառային, Տեր, դեպի խաղաղություն ըստ Քո խոսքի» (Ղուկ. Բ 29): Փիլիպոս սուրբ հայրապետը յուր սրբասուն հոգին ավանդեց Աստծո ձեռքը:

Նրա մահվան լուրը տարածվեց Արարատյան աշխարհի բոլոր շրջակա գավառները: Ամեն ոք, ով լսում էր, վհատված, թուլացած գետին էր ընկնում, որովհետև նա հայերի շուրջը ամուր պարիսպ էր, որ փլվեց: Շրջակա գավառներից մեծ բազմություն հավաքվեց, որովհետև վեց օր անթաղ մնաց: Էջմիածնի միաբանները և բոլոր վարդապետները կամենում էին սուրբ Էջմիածնի դռանը՝ իր շինած զանգակատան մեջ թաղել նրան, բայց Մահմադղուլի խանը, որ մեծ ոխ ու նախանձ ուներ հայրապետի դեմ, հայրապետի՝ խանի համեմատությամբ ավելի հզոր լինելու և զանգակատունը շինելու պատճառով, չթողեց: Քանզի խանը թույլ չէր տալիս զանգակատուն շինել, իսկ կաթողիկոսն իր ուժի զորությամբ հիմնեց և սկսեց շինել. և հայրապետի մահվան պահին, երբ խանը լսեց, թե կամենում են զանգակատան մեջ թաղել, խիստ գրգռվեց, չարացավ և մեծ հոխորտանքով ասաց. «Ես զանգակատունը քանդելու եմ»: Եվ այս պատճառով կաթողիկոսը վեց օր անթաղ մնաց. դագաղով Էջմիածնի տաճարի մեջ դրված էր, նա զվարթ երեսով՝ ինչպես կենդանի մարդ, քնած էր, և նրանից անուշ հոտ էր բուրում. ամենքը, որ մոտենում էին նրան համբուրելու, արմանում ու զարմանում էին հորդաբուխ անուշահոտի և երեսի զվարթության վրա. ոչ միայն քրիստոնյաները, այլև այլազգի մահմեդականները հիացած Աստծուն փառք էին տալիս, որ փառավորում է իր սրբերին:

Եվ որովհետև Մահմադղուլի խանը չմեղմացավ իր բիրտ բարքից, չթողեց կաթողիկոսին սուրբ Էջմիածնում թաղել, այդ պատճառով այնտեղից վերցրին նրա մարմնի պատվական մասունքները՝ խաչով, Ավետարանով, մոմերով, հոգևոր

երգերով, տարան սուրբ կույս Հռիփսիմեի տաճարում, խորանի հյուսիսային կողմում հանգստի դրին նրան: Նա Քրիստոսի մոտ բարեխոս է բոլոր քրիստոնյաների և իր հոգեծնունդ որդիների համար: Այժմ երկրի բոլոր բնակիչներից ցավագարները, ախտավորները ուխտի են գալիս նրա սուրբ տապանը համբուրելու և առողջություն են գտնում իրենց ցավերից, և փառավորելով Քրիստոսին՝ գնում են իրենց տեղերը»:

Այս երկու կաթողիկոսները իրենցից առաջ մոտ 2 դար եղող հոգևոր ճմռանից հետո դարձան պատճառ հոգևոր գարնան: «Ինչպես գարնանը, երբ հարավային հողմը փչելով ծննդագործում է հողը և բխեցնում է բազմազան ծաղիկների սեռերն ու տեսակները, որոնցով երփնազարդվելով վայելուչ տեսք է ստանում երկրի երեսը, այդպես էլ կարծես այս երկու կաթողիկոսների՝ Մովսեսի ու Փիլիպոսի ժամանակները եղան: Որովհետև բազմաթիվ վանքեր, անապատներ ու եկեղեցիներ շինվեցին» (Ա. Դավրիժեցի):

Այժմ տեսնենք, թե ինչպես է նույն պատմիչը խոսում այս անապատում գործած մեկ ուրիշ հոգեշնորհ Աստծո ծառայի մասին:

ՄԵԼՔԻՍԵԹ ՎԺԱՆԵՑԻ

Այս զարթոնքի շրջանում վերելք ապրեց նաև արդեն կորած համարվող արտաքին փիլիսոփայական գիտությունը: Այդ ժամանակ ասպարեզ եկան տոկուն վարդապետներ, որոնցից ամենաարգասավորն էր Մելքիսեթ Վժանեցին՝ «Մելքիսեթը մնաց տոկուն աշխատող մինչև վերջ և գերազանցեց (իր ուսուցիչներ) Բարսեղի և Ներսեսի հմտությունները» («Ազգապատում»):

Նա մեծ տքնությամբ 15 տարի սովորեց արտաքին գիտությունները և այն 8 ամսվա ընթացքում փոխանցեց սուրբ Անանիայի, Էջմիածնի և Հովհաննավանքի միաբաններին:

Մելքիսեթ վարդապետը մյուսների պես չդադարեցրեց այդ գիտությունների ուսուցումը նրա ծանրության և դժվարամատչելիության պատճառով, այլ մինչև վերջ ամուր կանգնած մնաց իր այդ դիրքերում՝ հասնելով մեծ հաջողությունների. «Բայց տեր Մելքիսեթը չթողեց փիլիսոփայական գրքերը և դրանց ընթերցումից չթուլացավ, այլ անդադրում տքնությամբ գիշեր-ցերեկ կարդում էր ու մտածում, բերում էր Ներսես վարդապետին ցույց տալիս և հարցնում, թե արդյոք ուղի՞ղ է գտած խոսքը:

Բազմաջանք ընթերցման հետ, որ անում էր ու խորհում միշտ, մշտապես տեսական իմաստության մեջ լինելով՝ սրա հետ նաև գործնական առաքինությունը միասին վերցրած, առաջ էր տանում, անապատի կարգ ու կանոնը հավասարապես սովորական եղբայր-միաբանների հետ կատարում էր: Նաև նրանցից ավելի գերազանց գիշերը անց էր կացնում աղոթքներով ու պաղատանքներով՝ ուղղված Տիրոջը և ամեն իմաստություն տվող Տեր Աստծուն, որպեսզի Նա իր համար բանա գրքերի իմաստության դռները և խելամիտ դարձնի նրանց հանճարին:

Այն, ինչ պատմեցինք վերոհիշյալ վարդապետների մասին, սա նրանցից բազմապատիկ ավելին էր: Փիլիսոփայական գրքերի ծանր աշխատանքը իր վրա վերցրեց, չհաշված այն ժամանակը, որ ընկերների հետ էր և կամ չափավոր ճգնությամբ,կրում էր տքնությունը [անքնությունը], այլև ուղիղ տասը տարի առանց իրեն խնայելու, իր մարմինը խաչ հանած՝ կարիքներով ու ցանկությամբ հանդերձ ըստ Պողոսի (Գաղ. Ե 16): Ավելի քան երկու տարի օրը մեկ հաց էր ճաշակում և ուրիշ ոչինչ: Իսկ այդ երկու տարին ամենևին լուռ մնաց և որևէ մեկի հետ չխոսեց, այլ [խոսում էր] Աստծու և գրքերի իմաստության հետ. և բոլորովին կրակի չմոտեցավ [տաքանալու], ճրագ կամ լույս իր հյուղակը չտարավ, այլ միշտ ցերեկը գրքեր էր վերծանում, գիշերը՝ խորհում:

Իսկ բոլոր էակներից անքննելին՝ Սուրբ Հոգի Աստված, որ քննում է ամեն ինչ և Աստծո խորքը՝ նայելով նրա մշտադիր հույսին ու անճանձրույթ խնդրանքին, նրա մեջ լցրեց իմաս-

տության ու գիտության շնորհները և պարգևեց խնդրելին՝ նրա հաճախակի պաղատանքի համար ըստ նմանության իր էակից Տեր Հիսուսի:

Քանզի բոլոր փիլիսոփայական գրքերի գիտությանը անտարակույս վերահասու իմացող եղավ՝ Սահմանացը, Պորփյուրին, Ստորոգությանը, Պերիարմենիասին, Աշխարհացն, Առաքինությանը, Վերլուծականին:Նաև բոլոր ազգերի տոմարը, որոնց պատճենը գրված կա մեր մեջ, քաջապես, առանց տարակույսի ամենին վերահասու եղավ՝ իմանալով նրանց սկիզբը, պատճառը և ամեն կարգը: Նաև տեղյակ եղավ քերականական գիտությանը և իմացավ ավելին, քան իր ժամանակակիցները:

Արդ՝ միայն սրանք չեն նրա շնորհքն ու գիտությունը, որ պատմում ենք, քանզի աստվածաշնչական գրքերից և ուսուցողական խոսքերից շատ բան անգիր էր արել և միշտ բերանացի էր ասում:

Բայց փիլիսոփայական գրքերը հիշատակում եմ այն պատճառով և շնորհակալ եմ նրանից, որովհետև այսպիսի օտար, այլատեսակ, այլանուն ու անծանոթ խոսք առանց վարժեցնողի և առանց որևէ մեկի ուսուցման, ինքնուրույն ամենը գտավ սկզբից մինչև վերջ:

Մարմնական հասակի համեմատությամբ առավել կատարյալ էր իմաստության և հոգու հասակը: Ներսես վարդապետը իր կամքով և անապատի բոլոր միաբանների վկայությամբ առաջ կանչեց նրան (Մելքիսեթին) բարձրագույն տեղի ու պատվի ըստ Տիրոջ հրամանի, թե՝ «Բարեկամ, բարձրացիր» (Տե՛ս, Ղուկ. ԺԴ 10), և շնորհեց նրան վարդապետության գավազան, որ հարաժամ քարոզությամբ աղբյուրաբար իմաստության ջրով մխիթարեր և զովացներ լսողներին:

Այն ժամանակի օրերում Մովսես վարդապետը, որ եղավ Էջմիածնի կաթողիկոս, դեռ նոր էր սկսել սուրբ աթոռ Էջմիածնի նորոգությունը և պարսպի շինությունը: Սուրբ աթոռ Էջմիածնի նորոգության և Մովսես վարդապետի կաթողիկոսության լուրը տարածվել էր ամբողջ աշխարհում, և այս առիթով ամենքը տենչում էին գալ նրանց տեսության: Սրա համար Մելքիսեթ վարդապետը Լիմ անապատից ելավ, եկավ Բարձրագահ աթոռ սուրբ Էջմիածին: Երկրպագեց Քրիստոսակոխ սուրբ Տեղին, տաճարին և հանդիպեց Մովսես կաթողիկոսին և նրա աշակերտներին, որի գալով ամենքը անպատմելիորեն ուրախացան: Երբ Մելքիսեթ վարդապետը դաս ու քարոզ էր տալիս, խոսքը նրա բերանից դուրս էր գալիս իբրև ուղխի ու հեղեղի հորձանք, որի իմաստության վրա ամենքը ապուշ կտրած զարմանում ու բաղձում էին»:

Քերականական հարցերի շուրջ եղող որոշ վեճեր ծագեցին այդ ժամանակ Էջմիածնի միաբանների և լատին վարդապետների միջև, և լատինները առավել հմուտ գտնվեցին այդ հարցում: Ուստի Էջմիածնականների խնդրանքով Մովսես Տաթևացին կարգադրում է, որ սբ. Անանիայի վանքից Մելքիսեթ վարդապետը տեղափոխվի Էջմիածին և ուսուցանի նաև այնտեղ. «Եվ ի լրումն այս ամենի, որ Մելքիսեթ վարդապետը դաս տվեց աշակերտաց եղբայրներին, մեծ ցնծությամբ և բերկրալից հոգով իր ձեռքերը երկինք բարձրացրեց, սկսեց գոհանալ Աստծուց. փառավորում էր և խոստովանում, որ իր շնորհները Տիրոջից են, և ասում էր աշակերտած եղբայրներին. «Ոչ մի այլ մտածմունք ու խոհ չկա իմ մտքում, բացի միայն այս իմաստության համար [մտածելուց], որ երկար և անհաշիվ տանջանքով հազիվ գտա, այն էլ Տիրոջ շնորհով. վախենում էի, թե առանց որևէ մեկի սովորեցնելու կմեռնեի, և այս պանծալի ու չքնաղ գիտությունը ինձ հետ հող կմտներ, կամփոփվեր: Բայց արդ՝ որովհետև դաս տվի ձեզ և Տիրոջից ընդունած խոսքի արծաթը գցեցի լումայափոխներին, այսուհետև փոխանակ տրտմության, մխիթարություն ունեմ, որովհետև թեպետ ես կմեռնեմ, բայց ձեր մեջ սերմանված Տիրոջ խոսքը կմնա աշխարհում, և այն, ինչ ես տասնհինգ տարի և էլ ավելի մեծ տաժանքով հազիվ կարողացա գտնել, արդ՝ հեշտ ու դյուրին ութ ամսվա ընթացքում

ձեզ հանձնեցի: Բայց ձեզնից խնդրում եմ, Տիրոջով սիրված իմ եղբայրներ, ինչպես մեզ պատվիրեցին մեր նախնի վարդապետները՝ կտակ անելով և մեզ վրա պարտավորություն դնելով, նրանց նման ես էլ այսօր ձեզ պատվիրում և նույն պարտականությունն եմ դնում ձեզ վրա, որպեսզի չթուլանաք և հանգիստ չտաք աչքերին և նինջ՝ արտևանունքներին, այլ բռնելով այս իմաստության շավիղը՝ ձեր կյանքի օրերում անդուլ ու անդադար աշխատեցեք սրա վրա մինչև ձեր վախճանի օրը: Իսկ ես հույս ունեմ Սուրբ Հոգի Աստծու՝ աննախանձ պարգևա-տուի վրա, որ բազմապատիկ ավելացնելով կարդյունավորի ձեզ շնորհներով մեզնից ավելի, և ինչ էլ որ պարգևի ձեզ, աննախանձաբար սովորեցրեք այլ խնդրողների, ով էլ որ նա լինի:

Սրանից հետո Մելքիսեթ վարդապետն ընկավ հիվանդության մահիճ, քանզի առաջին ծանրատար ճգնությունների համար, որ Լիմ անապատում դիմագրավելով համբերել էր ձմեռային ցրտին ու սառնամանիքին, սառը քամին արմատավորվել էր նրա մարմնում, որի պատճառով շուտ-շուտ հիվանդանում էր, որի հետևանքով հյուծվելով մաշվեցին անդամների բոլոր մասերը: Այդ հիվանդությամբ վճարեց այս կյանքը և գնաց վերին Իմաստության՝ Տեր Քրիստոսի մոտ» (Ա. Դավրիժեցի):

Նա էլ էր հաճախակի գալիս սբ. Անանիայի անապատը և երկար ժամանակ էր անցկացնում այնտեղ, և Մովսես Տաթևացու պես նա էլ իր վախճանը կնքեց սույն անապատում և թաղվեց սբ. Հովհաննես Կոզեռնի կողքին. «Բազմաշխատ Մելքիսեթ վարդապետի մահը եղավ Երևան քաղաքում, սուրբ առաքյալ Անանիայի դամբարանի վանքում: Նրան տարան ընդհանուր գերեզմանատուն՝ այն բլուրը, որ կոչում են Կոզեռն, որովհետև Կոզեռն վարդապետի գերեզմանի պատճառով, որ այնտեղ է, այդպես են կոչում բլուրը: Այնտեղ Կոզեռն վարդապետի գերեզմանին մոտիկ պատրաստեցին գերեզմանը և այնտեղ դրին հանգիստ նրա մարմնի պատվական, սրբասուն նշխարները և տապանաքարի վրա գրեցին անունը: Սրա

վախճանը տեղի ունեցավ 1631-թվականին: Այս գլխի սկզբում, որ վարդապետների կարգում հիշեցինք գավառացի Բարսեղ վարդապետին և սրա աշակերտ մոկացի Բեղլու Ներսեսին և սրա աշակերտ երևանցի Մելքիսեթին Վժան գյուղից, այս այն Մելքիսեթն է, որի պատմությունը արեցինք. սրա հիշատակը օրհնությամբ լինի և նրա աղոթքներով Տերը մեզ թողություն տա: Ամեն» (Ա. Դավրիժեցի):

Առաքել Դավրիժեցի պատմիչը, ստորև մեզ ախորժալուր տեղեկություն է հայտնում նաև շնորհաշատ և օգտակար մեկ այլ հոգևորականի մասին:

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ

Սուրբ Անանիայի վանական այս դպրոցում Մելքիսեթ Վժանեցու աշակերտներից հետագայում առավել ճանաչում գտավ Ոսկան Երևանցին: Նա մանուկ հասակից աշակերտել է Սպահանի Խաչատուր վարդապետի մոտ, և երբ Մովսես Տաթևացին Սպահան կատարած այցից ետ է վերադառնում՝ Ոսկանին էլ բերում է իր հետ:

Նա մնալով սուրբ Անանիայի վանքում իր ուսուցիչ Խաչատուր վարդապետի և ընկերոջ՝ Սիմեոն աբեղայի հետ, սկսեց աշակերտել Մելքիսեթ Վժանեցուն:

Այդ ժամանակ Էջմիածնում միաբանները առանձնապես տեղ չէին տալիս արտաքին գիտությունների կարևորությանը: Սակայն տեսնելով Երևանի սբ. Անանիայի անապատի միաբանների մեծ հաջողությունները այդ ասպարեզում, ինչպես վերը ասացինք, ցանկություն են հայտնում որ իրենք էլ սովորեն՝ դիմելով կաթողիկոսին. «Կամ մեզ ևս հրաման տուր գնալ Երևան Մելքիսեթից դասել առնելու, կամ նրան բեր այստեղ, որ Էջմիածնում դասավանդի»: Կաթողիկոսը ստիպված հրամայում է Մելքիսեթին՝ գնալ Էջմիածին և դասավանդելու այն բոլոր աբեղաներին, որոնք ցանկություն էին հայտնել: Երբ Մելքիսեթը գնաց, Խաչատուր վարդապետը չկամե-

ցավ գնալ Էջմիածին, այլ մնաց Երևանի վանքում: Երկուսից մեկնումեկին՝ Սիմեոնին կամ Ոսկանին, հարկ եղավ մնալ Խաչատուր վարդապետի մոտ, որովհետև երկուսն էլ նրա աշակերտներն էին մանկուց: Այստեղ Սիմեոնը, որպես ավագ, Ոսկանին ասաց. «Տե՛ս, տեր Ոսկան, մեզանից մեկը պիտի մնա այստեղ՝ վարդապետի հետ: Այս գիտություններն էլ հույժ պետքական են մեզ, որ գնալով Սպահան՝ ուսուցանենք: Եթե ցանկություն ունես սովորելու՝ դու գնա, ես կմնամ սպասավորելու նրան: Իսկ եթե չես ուզում՝ ես կգնամ. և դու այստեղ կսպասավորես վարդապետին»:

Սա էլ անտեղյակ լինելով գիտելիքներին և տարիքով պատանի լինելով՝ մանավանդ ավագության առաջնորդությանը, տալով Սիմեոնին՝ ինքը մնաց վարդապետի մոտ՝ Երևանում, իսկ Սիմոնը Մելքիսեթի հետ գնաց Էջմիածին որը և այնտեղ կարդաց Պորփյուրը, Ստորոգությունները, իսկ մեկնությունից (Պերիարմենիա) մինչև տասչորս գլուխ: («Ա. Դավրիժեցի»):

Դավրիժեցու պատմության ԾԷ գլուխը հետագայում ավելացվել է Ոսկան Երևանցու կողմից, որպես լրացում Դավրիժեցուց հետո եղող դեպքերին («ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագիր համար Է. 2000 թիվ, Խ. Սամվելյան, էջ 68-69): «Էջմիածնի Մելքիսեթ վարդապետի հանդեպ դրսևորած վերաբերմունքը թերևս պատճառ է դառնում, որ նա տեղափոխվում է Երևան, ուր և ս. Անանիայի անվան մենաստանում բաց է անում իր դպրոցը:

Ոսկան Երևանցու կողմից Առաքել Դավրիժեցու պատմության մեջ ավելացված ԾԷ գլխի հրապարակումով մեր մշակութային կյանքի պատմության մեջ ամրագրվում է տեսակետ, ըստ որի՝ Երևան քաղաքում 1631 թվականի սկզբին երեք-չորս ամիս ս. Անանիա մենաստանում (այժմ՝ ս. Զորավոր եկեղեցի) գործել է Մելքիսեթ վարդապետ Վժանեցու բացած դպրոցը, որտեղ իրականացվել է բացառապես բնական գիտությանը վերաբերող առարկաների՝ քերականության, փիլիսոփայության, տոմարագիտության դասավանդումը:

Ոսկան Երևանցու բերած այս հավաստիացումը, որքան մեզ

հայտնի է, միակ աղբյուրն է, որի միջոցով վավերացվում է Երևանում նման կարգի դպրոց լինելը, դպրոց, որի գոյությունը պետք է արժեքավոր ու կարևոր ներդրում համարել Երևանի մշակութային պատմության մեջ: Այդ դպրոցը, ըստ Ոսկան Երևանցու, գործել է «մի որոշ ժամանակ»: Այդ անորոշությունը ճշտելու միակ միջոցը թերևս կարող է համարվել ավանդվող առարկաների վրա ծախսված ժամանակամիջոցով: Մելքիսեթ Վժանեցին Երևանում հասցրել է իր աշակերտներին ուսուցանել քերականություն և Դավիթ Ներգինացու (Անհաղթի) «Սահմանք իմաստության» գիրքը: Կա մի վկայություն ևս. Մելքիսեթ վարդապետը իր «Կտակում» խոսելով տասնհինգ տարիների ընթացքում տքնանքով ձեռք բերած գիտելիքների մասին, ապա, խոսքն ուղղելով իր աշակերտներին՝ հպարտությամբ նշում է, որ ինքը «ութ ամսվա ընթացքում է այդ ամենը» սովորեցրել նրանց՝ Երևանի ու Էջմիածնի դպրոցներում: Պետք է ենթադրել, որ այդ ութ ամսվա մոտ կեսը դասավանդվել է Երևանում՝ Անանիայի անապատում, իսկ մյուս կեսը՝ Էջմիածնում («ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագիր):

Հետագայում Ոսկան Երևանցին մեկնում է Ամստերդամ և նվիրվում տպագրական գործին: Նա հանդիսացավ առաջին հայերեն տպագիր Աստվածաշնչի հեղինակը (1768թ.), նաև 19 կտոր այլ հոգևոր գրքերի և մի քանի գրքեր էլ տպագրեց Մարսելում և Ալիգուռնայում (Իտալիա). «Այս կերպով տպագրության ձեռնարկին կատարելապես նահատակ եղավ տպարանի փոշիների մեջ թավալվող այդ սրբազան արքեպիսկոպոսը» (Լեո, «Պատմություն»):

«Ոսկանի անձնավորությունը արժանի է մեր ազգի մտավոր զարգացման տեսակետից մեծ երախտավորների կարգը դասել, հայ տպագրությանը իսկապես մղում տվողին ճանաչել» («Ազգապատում»):

ԱՆԱՆԻԱՅԻ ԱՆԱՊԱՏԸ՝ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

17-րդ դարում եղող այդ «Մեծ զարթոնքի նախահայր» Մովսես Տաթևացու սուրբ Անանիայի անապատում մնալը դարձավ պատճառ նաև հայ գրչության արվեստի նոր վերելքի, որը առավել ակնառու էր սույն անապատում, որտեղ դասավանդվում էր աստվածաբանություն, գրչության արվեստ (բոլորագիր և նոտրգիր տեսակներով) և քերականություն: Այստեղ ուսանած գրիչների ընդօրինակությունների մեծ մասը պահվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

«ԺԶ-ԺԸ դդ. Երևանը հայտնի է դառնում որպես հայ գրչության կենտրոն, և դրանում զգալի ներդրում է ունեցել սբ. Անանիայի վանքի դպրոցը, որտեղ առաջնային տեղ էր հատկացված ձեռագրերի ընդօրինակման արվեստին: ԺԷ դարի 20-ական թթ. Մովսես Տաթևացու ծառայության շրջանում վանքի պահոցները հարստանում են նոր գրված կամ ընդօրինակված բազմաթիվ ձեռագրերով: Նրանցից մեկը՝ Քարոզգիրքը, 1623թ. ընդօրինակել է հենց ինքը՝ Մովսես Տաթևացին, և այդ մասին հիշատակություն թողել գրքի վերջում: Նշանավոր ընդօրինակող էր նաև Պողոս Տիվրիկեցին, որ 1623 թ. սբ. Անանիայի վանքում, Մովսես Տաթևացու հովանավորությամբ, նույնպես արտագրել է մի քարոզգիրք, իսկ Զաքարիա գրչի 1625թ. արտագրած մեծ ժամագրքի վերջում կա գրություն այն մասին, որ ինքը՝ Զաքարիա Վաղարշապատեցին աբեղա էր՝ Մովսես Տաթևացու աշակերտը որի հետ սբ. Անանիա վանքում ձեռագրությամբ զբաղվում էր նաև Տաթևացու մեկ ուրիշ աշակերտ՝ Եսայի Սյունեցի սարկավագը: Վերջինիս 1625-ին արտագրած մի ձեռագիր հասել է մինչև մեր օրերը և այժմ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (թիվ 1538):

Մովսես Տաթևացու մյուս ճանաչված աշակերտը՝ Մինասը, ձեռագրության արվեստին տիրապետել է կյանքի վերջին շրջանում՝ վաթսուններանց տարիքում: Նույն սուրբ Անանիա

վանքում նա 1626 թ. արտագրել է ժամագիրք, որի հիշատակարանում նույնպես տվյալներ կան Տաթևացու վերաբերյալ: Վանքի գրիչներից էր Մկրտիչ քահանան, որը 1631-ին ժամագիրք է արտագրել, իսկ 1658թ. վերականգնել է Գրիգոր Տաթևացու քարոզների գիրքը, այնուհետև ընդօրինակել փիլիսոփա Փիլոնի աշխատությունները: Նա իր հիշատակարանում գրում է, որ ինքը այդ գործը կատարել է «յանապատս Երեւանայ, առ շիրիմին Նշխարաց մեծի առաքելոյն Անանիայի ի կաճառս բազմակոյտ եղբարց սրբացնին»:

Սբ. Անանիայի վանքում ստեղծված ձեռագրերից գիտական արժեք է ներկայացնում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որը 1633թ. արտագրել է Մադաթիան: Ձեռագրի հիշատակարանը հուշում է, որ նրա գրիչը ոչ միայն գրագետ, այլև բանաստեղծական ձիրք ունեցող անձնավորություն է եղել:

Մատենադարանի 6221 թվակիր ձեռագրի գրիչը հայտնի չէ, քանզի հիշատակարանը, որը սովորաբար գրչի վկայագիրն է հանդիսանում, գրեթե ամբողջությամբ քայքայվել է և չի կարդացվում: Բայց հաջողվել է պարզել, որ ձեռագիրն ընդօրինակվել է Երևանում (1664թ.), մի այնպիսի ծանր ու դառն ժամանակներում, որը թելադրել է գրչին՝ հայցել սբ. Աստվածածնին (սբ. Անանիայի վանք), սբ. Երկու Երեսնի, սբ. Հակոբ, սբ. Կաթողիկե և այլ վանքերի հովանավորությունը հանուն Երևանի փրկության:

Շուրջ 20 տարի ձեռագրերի ընդօրինակությամբ է զբաղվել նաև Գրիգոր Երևանցի քահանան: Երևանի պատմությունն

ուսումնասիրողների համար արժեքավոր է 1686թ. նրա արտագրած ժամագրքի հիշատակարանը, ուր մանրամասն նկարագրված է 1679թ. Երևանի ավերիչ երկրաշարժը, ինչպես նաև տեղեկություններ կան Մովսես Գ կաթողիկոսի մասին: Այնուհետև, շուրջ 100 տարվա մի շրջան, սբ. Անանիայի վանքում որևէ ձեռագիր հավանաբար չի ստեղծվել կամ ընդօրինակվել: Ամենայն հավանականությամբ, եթե եղել է, ապա մեզ չի հասել, կամ ոչնչացվել է թուրք-պարսկական պատերազմի ժամանակ և կամ՝ գերեվարվել: Այս մասին են վկայում բազմաթիվ հիշատակարաններ, որոնք, երբևէ կրելով գերության լուծը, փրկվել ու վերադարձվել են հարազատ հարկ այս կամ այն բարեգործի ջանքերով կամ նույնիսկ՝ մարդկային կյանքի գնով:

Անանիայի վանքում գրված և մեզ հայտնի հաջորդ ձեռագիրն ստեղծվել է 1776թ.: Դա մի քարոզգիրք է, որ ընդօրինակել է Կիրակոս քահանան՝ վանքի վանահայր Ավետիս Կարբեցի վարդապետի տղան: Ներկայումս այդ գիրքը պահվում է Մատենադարանում 939 համարի տակ: Գրքի հիշատակարանը պատմում է մեր հայրենիքի այդ տարիների քաղաքական իրավիճակի, բնակիչների ծայրագույն կացության, լեզգիների և Վրաստանի թագավոր Հերակլի արշավանքների, պատմական նշանակություն ունեցող ուրիշ այլ իրադարձությունների մասին»:

(Բելլա Ավետիսյան, Տեր Մամբրե քահանա Քեսաբյան, «Սուրբ Զորավոր եկեղեցու պատմություն»):

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ

Ըստ մասնագետների, Սիմեոն Երևանցի բազմաշխատ կաթողիկոսն էլ է ուսում ստացել սուրբ Անանիայի անապատում: Սակայն նրա կողմից սույն անապատի մասին գրված շատ քիչ տեղեկություններ մենք գտանք: Նրա «Ջամբռ» գրքում վանքերի մասին շարադրանքի մեջ կա մի փոքր տեղեկություն Անանիայի անապատի մասին և մի կոնդակ. «Վասն

առաջնորդութեան Անանիայի Առաքելոյ Վանից.

Առաջնորդական Կոնդակ ետ սրբազան Պետրոս վարդապետին, որ ի քրդաստանու կողմ է, և արար զնա Առաջնորդ Սուրբ Անանիա Առաքելո վանից և նորին վիճակացն, որք էին Առինջ գյուղ և բոլոր բօշայք»: Նա էլ իր նախորդ կաթողիկոսների Մովսես Տաթևացու և Փիլիպոս Աղբակեցու պես հաճախ, հատկապես ամառանը, մնում էր Երևանում («Ազգապատում») և, համաձայն վերը հիշատակված կաթողիկոսների՝ հավանական է, որ այդ ամառային օրերն անցկացնում էր սուրբ Անանիայի անապատում, որի վանահայրը այդ ժամանակ Պետրոս վարդապետն էր, ինչպես որ կոնդակում գրված է այդ մասին: Սիմեոն Երևանցին Հայաստանում հիմնադրեց առաջին տպարանը և թղթի գործարանը:

«Սիմեոնի արդյունքների գլուխ կարող է դիտվել կրթության համար հոգածությունը, բայց ոչ միայն ուսուցիչ, այլև իբրև շինարար, տնտեսագետ, վարիչ, քաղաքագետ, տպագրիչ, մատենագիր, շատ ընդարձակ և շատ բեղմնավոր արդյունավորություն ունեցավ իր կաթողիկոսության մեջ:

Իր բազում գործերից միայն «Ջամբռ»-ը հրատարկվեց: Բազմաթիվ են նաև եկեղեցական գործերի համար նրա կազմած կանոնները, որոնք, եթե հիշատակություններից քաղվեն, կարելի է մի կանոնագիրք կազմել» («Ազգապատում»):

ՍՈՒՐԲ ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ

«Երևանը, որ հաճախակի պատահող տարերային աղետների կենտրոն էր, 1679թ. հունիսի 4-ին վերապրեց սարսափելի և ավերիչ մի նոր երկրաշարժ ևս: Այս անգամ աղետի կիզակետը Գառնին էր: ԺԷ դարի պատմիչ Զաքարիա սարկավագի վկայությամբ, ստորգետնյա ցնցումները շարունակվել են շուրջ

չորս ամիս: Վնասվել են Երևանի բազմաթիվ շինություններ, այդ թվում նաև սբ. Անանիայի վանքը, որտեղ աղոթքի պահին իր հավատակից եղբայրների հետ փլատակների տակ գտնվում է նաև գիտնական և համբավավոր հռետոր Ստեփանոս վարդապետը՝ Գեղարդի (Այրիվանքի) վանահայրը:

Այս տարիներին է, որ երևանցի վաճառական խոջա Փանոսի բարեգործական միջոցներով նոր հիմքի վրա, զանգակատնից քիչ հեռու, սբ. Աստվածածնի պատվին կառուցվում է ներկայիս եկեղեցին՝ զանգակատնով: Շինարարության ավարտից հետո գլխավոր մուտքի վրա տեղադրվել է մի հուշաքար, որը պատմում է եկեղեցու անվան և այն մասին, որ եկեղեցին կառուցվել է ի հիշատակ խոջա Փանոսի նախնիների ու սերունդների:

Թեև այս գրությունը բազմիցս է ուսումնասիրվել հետազոտողների կողմից, այսուհանդերձ, եկեղեցու կառուցապատման տարեթվի վերաբերյալ տարակարծություններն առկա են, քանզի գաղտնագիրը գրեթե անընթեռնելի վիճակում է: Կառուցման տարեթիվն ընդունված է համարել 1693-ը՝ հիմք ունենալով, հավանաբար, արևելյան նրբագեղ խաչքարի գրությունը» («Պատմություն սբ. Զորավոր եկեղեցու»):

Ինչպես ասվեց, Զորավոր անվանումը կապված էր սուրբ Անանիա առաքյալի «ամենազոր» նշխարների հետ: Սակայն մի այլ պատճառ էլ է եղել, որ այդ «Զորավոր» անունը հաստատվի այս Եկեղեցու վրա:

«Սբ. Անանիայի վանքի հարուստ կենսագրությանը զուգահեռ մեզ են հասել բազմաթիվ ավանդություններ, որոնք և օգնում են պարզաբանելու եկեղեցու «Զորավոր» անվան ծագումը: Համաձայն դրանցից մեկի, որ գրի է առել սբ. Ղազար կղզում Մխիթարյան միաբանության ճանաչված ուսումնասիրողներից Գ. Ինճիճյանը՝ թշնամական արշավանքների ժամանակ կողոպտվել է Սևանա կղզու վանքը: Գողացված արժեքների թվում է եղել նաև հրաշագործ (զորավոր) մի Ավետարան, որն ինչ-որ ձևով լիճն է ընկնում: Լճից Զանգու (Հրազդան) գետի ջրով Ավետարանը հասնում է մինչև

Երևան և հայտնվում աստվածապաշտ, հավատավոր մի կնոջ մոտ, որը և Սուրբ Գիրքը հանձնում է սբ. Անանիայի վանքին: Այստեղ Ավետարանը պահվում է մինչև ԺԹ դ. վերջը: Ավետարանի հրաշագործ զորության նկատմամբ ունեցած հավատի ազդեցությամբ ժողովուրդը առօրյա խոսակցության պահին, իր խոսքը հաստատելու նպատակով, երդվում էր «Զորավոր Ավետարանով»՝ երբեմն-երբեմն եկեղեցին կոչելով նաև սբ. Զորավոր: 1835-ից հետո, երբ վանական կյանքն այստեղ արդեն դադարել էր գոյատևելուց, եկեղեցին դառնում է Մարաղայից (Պարսկաստան) գաղթած և մոտերքում ապրող հայերի ծխական աղոթատեղին և վերջնականապես անվանվում «սբ. Զորավոր»: Ցավոք, ձեռագրի նկատմամբ քնքուշ զգացումներ ծնող գաղտնիքը այդպես էլ մնաց չբացահայտված: Մինչև այսօր էլ անհայտ է, թե ո՞ր Ավետարանի մասին է այս պատմությունը և թե որտե՞ղ է գտնվում այն» («Պատմություն սբ. Զորավոր եկեղեցու»):

1895 թ. Վաղարշապատում տպագրված «Տեղեկագիր Գեղարքունի» աշխատության մեջ պատմվում է մի ճանա-

Սբ. Զորավոր եկեղեցու տեսքը մինչև 1970-ականը



Սուրբ Զորավոր եկեղեցու հատակագիծը

պարհորդության մասին: Էջմիածնից Տփղիս (Թբիլիսի) գնալու ճանապարհին Մեսրովբ արքեպիսկոպոսն անցնում է Երևանով և այցելում տեղի սրբավայրերը, նաև՝ սուրբ Զորավոր եկեղեցին: «Ապա գնացինք սուրբ Անանիա առաքյալի անվամբ շինված եկեղեցին, որ այժմ «Զորավոր» է անվանվում: ...Այս եկեղեցու միջից՝ արևմտյան դռան մոտից, սանդուղքներով ուխտավորներն իջնում են 10 աստիճան գետնի տակ՝ ուխտ անելու Անանիա առաքյալի գերեզմանին, որ մի փոքրիկ թաղակապ մատրանի մեջ է, որ և մենք իջնելով՝ խունկ ու մոմ նվիրեցինք Անանիա առաքյալին և հայցեցինք նրա բարեխոսությունը բոլոր ճանապարհորդների համար: Այս վայրը վանականների տեղ լինելով՝ երբեմն նստում էին վանահայր վարդապետներ, ինչպես և Մովսես Սյունեցի (Տաթևացի) մեծանուն կաթողիկոսը և ուրիշ շատեր»:

1961թ. Վազգեն Ա-ի ջանքերով սկսվեցին սբ. Զորավոր եկեղեցու վերականգնման աշխատանքները, իսկ 1978-1980-ին կատարվեցին նաև որոշ վերակառուցումներ:

Այսօր էլ սուրբ Զորավոր եկեղեցու վրա վերանորոգման աշխատանքների կարիք կա: Սակայն առավել մեծ աշխատանքների կարիք է զգացվում եկեղեցուն կից տարածքում, որտեղ մինչև վերջերս պահպանվել էին Փիլիպոս Սքանչելագործ հայրապետի կողմից կառուցված խցերի մնացորդները: Այստեղ նախատեսված է կառուցել մի շինություն, որը մի գուցե կկրի մեր երանելի հայրապետի՝ Մովսես Տաթևացու անունը, և հուսով ենք, որ այն նորից կծառայի այսօրվա մեր

հոգևոր կյանքի վերելքին աջակցելուն: Կառույցի նախագիծը վաղուց պատրաստ է. եթե գտնվեն հովանավորներ, ապա այս օրհնված վայրը, որ դարեր շարունակ մեր սուրբ հայրերի կողմից մշտապես վերանորոգվել է, կվերանորոգվի ևս մեկ անգամ, և նրա հովանավորները կարող են հուսալ արժանանալու առ Աստված առաքված նրանց բարեխոսությանը և բախտ ունենալ հիշվելու եկեղեցական աղոթքներում: Քանզի նման երախտավորները մշտապես հիշատակման են արժանանում. «Ողորմեա զեկեղեցի շինողաց, երախտավորաց, պտղտուից, սպասավորաց և այնոցիկ, որք ընդ հովանեաւ սրբոց եկեղեցւոյ են հանգուցեալ» (Ժամագիրք):



Սբ. Զորավորի երկայնական կտրվածքը

ԿՈՂԵՌՆԻ ՄԱՏՈՒՌԸ

Վերը նշված հիշատակությունների մեջ շատ հաճախ հիշվում էր Կոզեռնի գերեզմանատան և Կոզեռնի մատուռի մասին: Ինչպես արդեն նշվեց, այս բլուրը, որ շրջափակված է Պռոշյան, Դեմիրճյան և Բաղրամյան փողոցներով, ժամանակին եղել է Երևանի հնագույն գերեզմանոցներից մեկը և, ինչպես արդեն ասվեց, 10-11-րդ դարերի հայոց մեծ վարդապետ Հովհաննես Կոզեռնը թաղվել է այս բլրի վրա. «Կոզեռնի մոտ հետագայում թաղվել է Բաղեշի Ամրդոլա վանքի արտաքին գիտությունների դպրոցի նշանավոր վարժապետ Մելքիսեթ Վժանեցի վարդապետը, իսկ դրանց երկուսի մեջտեղը՝ մեր հայտնի Մովսես Գ. Սյունեցի կաթողիկոսը: Այդտեղ՝ դրանց գերեզմանների վրա, հետագայում շինվել է մի

վայելուչ մատուռ, որը կոչվել է «Կոզեռնի մատուռ», և որը վաղուց արդեն հնացած է եղել, և Մելիք-Սահակ Աղամալյանը 1829 թվին վերանորոգել և իր համար ընտանեկան դամբարան է դարձրել: Այդ հին գերեզմանները, մինչև այսօր էլ դեռ երևում են կիսաքանդ, անխնամ և ապականության մեջ պահված մատուռում: Մովսես կաթողիկոսի գերեզմանի տապանաքարի վրա դժվարությամբ կարդացվում է.

«Այս է գաղան գամբարանի Եղյալ շիրիմ
Ճանապարհի՝ Տէառն Մովսէսի վարդապետի
ընդրեալ սուրբ Հայրապետի Որ է գեղա-
Տաղէս-ացի Նորոգող սուրբ Էջմիածնի
Բացող է- շինող գամբէրի»

(Երվանդ Շահազիզ. «Հին Երևանը»):

1934 թվականին որոշում է կայացվել տեղափոխել գերեզմանոցը: Ոմանք իրենց հարազատների շիրիմները տեղափոխեցին, սակայն հիմնական մասը ուղղակի քանդվեց, և մինչև մեր օրերը, երբ որևէ պատճառով հող են փորում, այդտեղ հանդիպում են մարդկային ոսկորների և գանգերի:

«Երևանը այդ ուղղությամբ ընդարձակելու պատճառով գերեզմանը մնացել էր քաղաքի մեջ: Այդ պատճառով էլ այն

պետք է տեղափոխվեր և, մինչ ննջեցյալների աճյունները իրենց տապանաքարերով այլ գերեզմանոցներ տեղափոխելը, մեզ հանձնարարեցին՝ ուսումնասիրել հնավայրը: Այդ աշխատանքները կատարվեցին 1934 թվականին» (Կարո Ղաֆադարյան. «Երևան. Միջնադար, Հուշարձաններ»):

Զարհուրելի էր մտածել, որ մեր երկրի այդ սուրբ մարդկանց գերեզմանները կարող էին նույն ճակատագրին արժանանալ, ինչ մյուս բազմաթիվ գերեզմանները, որոնց տապանաքարերով կառուցեցին Երևանի համար 29 դպրոցը, որի պատերի վրայի հին արձանագրությունները մինչև այսօր երևում են: Պարզվեց, սակայն, որ Աստծո ողորմությամբ մատուռը կանգուն է մնացել, չնայած այն ոչ մի տեղ չի երևում:

Ահա թե ինչ պատմեց ժամանակին Կոզեռն թաղամասի տնային լիազոր, ապա կոմիտեի նախագահ, 73-ամյա Կառլեն Հախվերդյանը.

«Մենք 1955 թվականից այստեղ ենք բնակվում, այդ թվերին մատուռի մոտակայքում ընդամենը մի քանի տուն կար:

Ես ցանկանում էի մատուռին կից ապրող զինվորական Հայ-կազից գնել մատուռը (այն ժամանակվա դրամով 600 ռուբ-լի) իմ ազգականների համար, որպեսզի գյուղից գան և ապ-րեն այստեղ: Դա արդեն 1960 թվին էր:

Բայց նրանք, Վեղիում հողամաս ունենալու պատճառով, փոշմանեցին և չուզեցին գալ Երևան: 1970-ական թվերին այն գնեց Մկրտչյան Ազիզը՝ 1925 թվի ծնված, և կից սենյակ-ներ կառուցելով՝ մատուռը դարձրեց իր բնակելի սենյակնե-րից մեկը: Վերջին անգամ արդեն վաղուց է, որ տեսել եմ մա-տուռը, նրա ծածկը, պատերը և հատակը մնացել էին նախնա-կան վիճակով»:

Մենք այցելեցինք Մկրտչյանների ընտանիքին և հարցու-փորձ արեցինք. նրանք շատ սիրալիր ընդունեցին մեզ և պատ-մեցին մատուռի մասին (9.04.2002): Ասացին, որ արևմտյան դուռը փակել էին, իսկ արևելյան պատը քանդելով՝ մուտք դարձրել: Երևում էին մատուռի պատերի հաստությունը և տանիքի կամարը, որոնք սվաղված էին և փչված : Ասացին, որ մեջը տապանաքարեր չեն եղել և, ապա, հատակը բետոնել և փայտով պատել էին: Եվ քանզի հատակը վնասված չի եղել, ապա հուսով ենք, որ նրանց սրբասուն նշխարներն էլ ան-խախտ իրենց տեղում են, ինչպես սբ. Անանիայի նշխարները, անկախ շինությունների դարեդար ավերումներից և վերանո-րոգումներից հետո էլ մշտապես իրենց տեղում են մնում Տիրոջ կամոք: Սակայն մեր ազգի համար անվայել է՝ այսօր տեսնել մատուռի այդ վիճակը և անտարբեր մնալ:

Այդ մատուռը այնտեղ ննջող սրբերի աճյունների պատճա-ռով համարվել է մեծ սրբավայր, և նույնիսկ այստեղ նրանց հիշատակին Սուրբ Պատարագ է հաճախ մատուցվել: Ինչպես այդ մասին վկայված է 1842 թվականին գրված. «Ստո-րագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառաց Արա-ռատայ» աշխատության հեղինակ Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կողմից՝ «Կոզեռն կոչված բլրակը, որ քա-ղաքի հյուսիսային կողմում է գտնվում, հանդիսանում է որ-

պես հայազգի բնակիչների գերեզմանատուն:

Բարձրավանդակի կենտրոնում գտնվում է մատուռը, որտեղ Հովհաննես վարդապետի գերեզմանի վրա պատարագելու տեղ է: Նրա անունով էլ կոչվում է բլրակը: Առընթեր հիշյալ վար-դապետի, ամփոփվեց նաև Մովսես կաթողիկոս Սյունեցին»:

Մի կողմից ուրախալի փաստ է մատուռի կանգուն լինելը, իսկ մյուս կողմից էլ մեծ ցավ ենք ապրում՝ տեսնելով Հայոց աշխարհի այս մեծագույն երախտավորների հիշատակի հան-դեպ նման անտարբեր վերաբերմունքը: Գուցե այս ընտանի-քի բնակվելով է պայմանավորված այն, որ մատուռը անաստված բռնակարգի աչքից հեռու մնալով՝ չի քանդվել: Սակայն մեր ժամանակներում, երբ արդեն անցյալ է դարձել 70-ամյա անաստվածության շրջանը, պետք է պատշաճ վերա-բերմունքի արժանացնել այդ սրբավայրը, շնորհակալություն հայտնել տեղի բնակիչներին և հոգալ նրանց բնակարանային պայմանների մասին՝ վայրը բարեկարգելով և նորից այդ ուխ-տատեղին իր նախկին վայելուչ տեսքին բերելով:

Ցավոք, Եկեղեցին այսօր միայն իր ուժերով ի զորու չէ այդ

Սբ. Կոզեռնի մատուռը 30-ական թվականներին:

նվիրական վայրը բարեկարգել ըստ պատշաճի. դրա համար հարկ է պետական հոգացություն: Ինչպես բազում բնակիչ-ների բնակարանային պայմաններն ապահովելով պետությունը մաքրեց Հյուսիսային պողոտայի համար նախատեսված տարածքը, այնպես էլ կարելի է, ցանկության դեպքում, անել այս պարագայում:

Եթե մենք մեր երկրի ներսում պատշաճ վերաբերմունք չկարողանանք մատուցել մեր Մեծերի շիրիմներին և եկեղեցական շինություններին, էլ ի՞նչ պահանջենք մեր հարևան ազգերից, որոնք՝ մասնավորապես վրացիները մեր մեջ վրդովմունք են առաջացնում մեր եկեղեցիների հանդեպ ունեցած ոտնձգությունների և հայ հեղինակությունների շիրիմների պղծման համար: Անցած70 տարիներից հետո շատ նախանձելի է այսօր Ռուսաստանի դիրքորոշումը իրենց սրբերի և նահատակների հիշատակի հանդեպ:

*Տա Աստված, որ մենք էլ ակնածանք տածենք մեր մեծանուն սուրբ հայրերի հիշատակի հանդեպ և արժանանանք նրանց բարեխոսությանը առ Աստված, որպեսզի Աստծո ողորմության դռները բացվեն Հայաստան աշխարհի վրա, և մենք էլ արժանանանք համաձայն Նոր Կտակարանյան պատվիրանի՝ **«Հոգով և ճշմարտությամբ»** մեր սուրբ հայրերի պես փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն հավիտյանս: Ամեն:*

«Ցաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 1

Մուտք 3

Սբ. Անանիա առաքյալի վկայաբանությունը 4

Սբ. Հովհաննես Կոզեռն 10

Սբ. Անանիայի անապատը 15-րդ դարում 13

Տաթևացուց մինչև Տաթևացի 16

Տեր Մովսեսի վարդապետության ու կաթողիկոսության մասին 23

Փիլիպոս Աղբակեցի 49

Մելքիսեթ Վժանեցի 56

Ոսկան Երևանցի 61

Անանիայի անապատը՝ գրչության կենտրոն 64

Սիմեոն Երևանցի 67

Սբ. Զորավոր եկեղեցի 68

Կոզեռնի մատուռը 71